

Երևան քաղաքի 33-րդ թաղամասի կառուցապատման նախագծի

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
(3-րդ լրամշակված և լրակազմված տարբերակ)

Ձեռնարկող՝ «Սիթի Սենթր Դիվելոպմենթ» ՓԲԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
1. Նախատեսվող գործունեության հիմնավորումը	7
1.1 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը	13
1.2 Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	15
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՉՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)	19
2.1 Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ	19
2.2. Կառուցվող թաղամասի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներ	23
2.3 Նախապատրաստական և քանդման աշխատանքներ	28
2.4 Հողային աշխատանքներ	30
2.5 Շինարարական աշխատանքների կատարման սխեմա	30
2.6 Շինարարության կազմակերպում	32
2.7 Ջրամատակարարում և ջրահեռացում	34
2.8 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	36
2.9 Կառուցապատումների ամփոփ նկարագրերն՝ ըստ ԼՈՏ-երի	37
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	50
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ	50
3.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները	50
3.2 Ռելիեֆը	52
3.3 Կլիման	52
3.4. Տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները	54
3.5 Տարածքի սեյսմիկ բնութագիրը	55
3.6. Մթնոլորտային օդ	55
3.7. Ջրային ռեսուրսներ	57
3.8. Հողային ռեսուրսներ	58
3.9. Կենսաբազմազանություն	59
3.10 Մոցիալ տնտեսական պայմանները	61
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՂԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	64
4.1 Ռիսկերի գնահատում	64
4.2 Օղի աղտոտում	65
4.3 Աղմուկի և թրթռումների ազդեցություն	66
4.4 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն	66
4.5 Բնապահպանական միջոցառումներ	67
4.5.4. Աղմուկի և թրթռումների ազդեցություն	70
Վերջնական աշխատանքային նախագծի մշակման փուլում յուրաքանչյուր կառուցապատողի կողմից ըստ լոտերի կմշակվի վերջնական ճարտարապետա-շինարարական նախագիծ, որը կներառի նաև հուշարձանների պահպանության նախագծերը նշված լոտերի համար: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծերը կհամաձայնեցվեն պետական լիազոր մարմնի հետ և կստանան մասնագիտական եզրակացություններ և որում կսահմանվեն պահպանության ընթացակարգեր:	73
4.6 Հնարավոր արտակարգ իրավիճակները, աշխատանքի անվտանգություն և առողջություն	76
4.7 Փոխհատուցում, բնապահպանական միջոցառումներ	77
3. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ	82

5.1	Մշտադիտարկումների /մոնիթորինգի/ նպատակը	82
6	ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ	83
7.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	85
8.	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ/ ՊԼԱՆ	90
9.	ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	93

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Նախատեսվող գործունեություն	Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի 33-րդ թաղամասում (ֆիրդուսի) բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցապատում
Նպատակը	Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցում
Ձեռնարկող	<<Սիթի Սենթր Դիվելոպմենթ>> ՓԲԸ-ն՝ իր և հետևյալ ընկերությունների անունից՝ համաձայն 2020 թ-ի մարտի 12-ին Սիթի Սենթր Դիվելոպմենթ ՓԲԸ-ի և թվարկված ընկերությունների միջև կնքված համաձայնագրի. 1. <<Բայազետ Քոնսթրաքշն>> ՍՊԸ, 2. <<Ուրմիա Քոնսթրաքշն>> ՍՊԸ, 3. <<Տրապիզոն Քոնսթրաքշն>> ՍՊԸ, 4. <<Դիարբեքիր Քոնսթրաքշն>> ՍՊԸ, 5. <<Ակն Քոնսթրաքշն>> ՍՊԸ, 6. <<Մանազկերտ Քոնսթրաքշն>> ՍՊԸ, 7. <<Սասուն Քոնսթրաքշն>> ՍՊԸ, 8. <<Զեյթուն Քոնսթրաքշն>> ՍՊԸ, 9. <<Բաբերդ Քոնսթրաքշն>> ՍՊԸ, 10. <<Էրզրում Քոնսթրաքշն>> ՍՊԸ, 11. <<Վան Քոնսթրաքշն>> ՍՊԸ, 12. <<Տարսոն Քոնսթրաքշն>> ՍՊԸ, 13. <<Կարս Քոնսթրաքշն>> ՍՊԸ, 14. <<Արդահան Քոնսթրաքշն>> ՍՊԸ, 15. <<Իգդիր Քոնսթրաքշն>> ՍՊԸ:
Ներգրավված իրավաբանական անձինք	1. <<Էրզրում Քոնսթրաքշն>> ՍՊԸ– Լոտ 01, 1 2. <<Վան Քոնսթրաքշն>> ՍՊԸ– Լոտ 3 3. <<Բայազետ Քոնսթրաքշն>> ՍՊԸ – Լոտ 6 4. <<Ուրմիա Քոնսթրաքշն>> ՍՊԸ– Լոտ 7 5. <<Տրապիզոն Քոնսթրաքշն>> ՍՊԸ– Լոտ 8 6. <<Դիարբեքիր Քոնսթրաքշն>> ՍՊԸ– Լոտ 9 7. <<Ակն Քոնսթրաքշն>> ՍՊԸ– Լոտ 9 8. <<Մանազկերտ Քոնսթրաքշն>> ՍՊԸ– Լոտեր 10,11 9. <<Սասուն Քոնսթրաքշն>> ՍՊԸ– Լոտ 12 10. <<Զեյթուն Քոնսթրաքշն>> ՍՊԸ– Լոտ 13

	11. <<Բաբերդ Քոնսթրաքշն>> ՍՊԸ– Լոտ 14 12. <<Տարսոն Քոնսթրաքշն>> ՍՊԸ-Լոտ 14 13. <<Սիթի Սենթր Դիվելոպմենթ>> ՓԲԸ-Լոտեր 15,16 14. <<Կարս Քոնսթրաքշն>> ՍՊԸ– Լոտ 17 15. <<Արդահան Քոնսթրաքշն>> ՍՊԸ– Լոտ 18 16. <<Իզդիբ Քոնսթրաքշն>> ՍՊԸ– Լոտ 19
Ձեռնարկողի հասցե	ք.Երևան, 0015, Արգիշտի 7/8
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	Հեռ.՝ (+374 11) 733099 (+374 98) 131471 Էլ-փոստ՝ eccecaucasus@gmail.com q-gnel@mail.ru
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ ք. Երևան Կենտրոն վարչական շրջան, 33-րդ թաղամաս
Կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը	57 694,19 քմ
Կառուցապատման ընդհանուր մակերես	19 376,72 քմ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Երևան քաղաքի 33-րդ թաղամասի կառուցապատում>> աշխատանքային նախագծի իրականացումն ունի առանձնահատկություններ՝ պայմանավորված աշխատանքների ծավալներով /քանդման և կառուցապատման աշխատանքներ/, տարածքի ընդգրկվածությամբ և կառուցապատման նախագծման մեջ ներգրավված կողմերի շրջանակով: Նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում <<Սիրի Սենթր Դիվելոփմենթ>> ՓԲԸ-ն՝ իր և հետևյալ ընկերությունների անունից՝ <<Բայազետ Քոնսթրաքշն>> ՍՊԸ, <<Ուրմիա Քոնսթրաքշն>> ՍՊԸ, <<Տրապիզոն Քոնսթրաքշն>> ՍՊԸ, <<Դիարբեքիր Քոնսթրաքշն>> ՍՊԸ, <<Ակն Քոնսթրաքշն>> ՍՊԸ, <<Մանազկերտ Քոնսթրաքշն>> ՍՊԸ, <<Սասուն Քոնսթրաքշն>> ՍՊԸ, <<Զեյթուն Քոնսթրաքշն>> ՍՊԸ, <<Բաբերդ Քոնսթրաքշն>> ՍՊԸ, <<Էրզրում Քոնսթրաքշն>> ՍՊԸ, <<Վան Քոնսթրաքշն>> ՍՊԸ, <<Տարսոն Քոնսթրաքշն>> ՍՊԸ, <<Կարս Քոնսթրաքշն>> ՍՊԸ, <<Արդահան Քոնսթրաքշն>> ՍՊԸ, <<Իգդիր Քոնսթրաքշն>> ՍՊԸ, համաձայն 2020 թ-ի մարտի 12-ին <<Սիրի Սենթր Դիվելոփմենթ>> ՓԲԸ-ի և թվարկված ՍՊԸ-ների միջև կնքված համաձայնագրի: Ըստ այդ համաձայնագրի ձեռնարկող <<Սիրի Սենթր Դիվելոփմենթ>> ՓԲԸ-ն կազմակերպելու է փորձաքննական գործընթացը, որի արդյունքներով տրամադրվող փորձաքննական եզրակացությունը կիրառելի կլինեն մյուս կառուցապատողների գործունեության համար, քանի որ կառուցապատումը կատարվելու է մեկ՝ միևնույն տարածքում:

Կառուցապատվող տարածքը զբաղեցնում է շուրջ 57 հազար ք.մ: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով չի սահմանվում տարածքի մեծության որևէ շեմ, որից բարձր մակերեսով կառուցապատումը կարող է համարվել այլ կատեգորիայի գործունեություն, կա ընդամենը սահմանված մեկ շեմ՝ 1500 ք.մ և ավել, որը տարածվում է նաև այս դեպքի վրա և գործընթացը պետք է իրականանա <<Գ>. կատեգորիայի համար նախատեսված ընթացակարգով: <<Երևան քաղաքի 33-րդ թաղամասի կառուցապատում>> աշխատանքային նախագծի իրականացման համար իրավական հիմք են հանդիսացել՝ տարածքի վերաբերյալ առկա իրավական փաստաթղթեր, որոնցից են՝ <<Գերակա հանրային շահ ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության համապատասխան որոշումը, Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրանքները և տարածքի նկատմամբ իրավունքի գրանցման վկայականները, /որոնք տրվել են առանձին՝ բոլոր այն լոտերի համար, որոնք ընդգրկված են այս փուլի կառուցապատման և սույն նախնական նախնական գնահատման աշխատանքներում/:

1. Նախատեսվող գործունեության հիմնավորումը

Հիմք ընդունելով Երևան քաղաքի գլխավոր հատակագիծն ու դրա հիման վրա առաջացած քաղաքի զարգացման հեռանկարները և Կենտրոն վարչական շրջանի գոտևորման նախագիծը, Երևան քաղաքի 33-րդ թաղամասի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին 22 մարտի 2018 թվականի Հայաստանի Հանրապետության կառավարության N 332-Ն որոշման համաձայն, նշված տարածքների /որոնք բերված են որոշման հավելված 1-ում/ նկատմամբ ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ՝ հետևյալ հիմնավորումներով.

ա. սույն որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17 և 18 հավելվածներում նշված տարածքներում քաղաքաշինական ծրագրի իրականացմամբ Երևանի կենտրոնից կվերանա ներկայումս առկա խառը, անկանոն կառուցապատումը՝ տարերայնորեն տեղակայված հին և խաբխուլ շինություններով,

բ. համաձայն Երևան քաղաքի գլխավոր հատակագծի և Կենտրոն վարչական շրջանի համաձայնեցված գոտևորման նախագծի՝ սույն որոշման հավելվածներում նշված տարածքները կհանդիսանան որպես ճարտարապետական մեկ համալիր՝ պահպանելով ներդաշնակ կառուցապատում, ժամանակակից պահանջներին համապատասխան մայթերով և փողոցներով, ինչպես նաև սույն որոշման 1-ին կետում նշված տարածքում առկա բնակարանային ֆոնդին մի քանի անգամ գերազանցող նոր բնակարանային ֆոնդի կառուցում, ինչպես նաև կառուցվող ստորգետնյա ավտոկայանատեղիները հնարավորություն կընձեռեն նվազեցնելու Երևան քաղաքի կենտրոնում փողոցների ծանրաբեռնվածությունը:

Որոշմամբ նշված տարածքների ձեռք բերող են հանդիսանում սույն որոշման N 1 հավելվածում նշված իրավաբանական անձինք, այդ թվում՝ «Սիթի Սենթր Դիվելոպմենթ» ՓԲԸ, «Վան Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Էրզրում Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Բիթլիս Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Ադանա Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Բայազետ Քոնսթրաքշն ՍՊԸ, «Ուրմիա Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Տրապիզոն Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Դիարբեքիր Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Ակն Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Մանազկերտ Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Սասուն Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Զեյթուն Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Բաբերդ Քոնսթրաքշն» ՍՊԸ «Տարսոն Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Կարս Քոնսթրաքշն» ՍՊԸ, <<Արդահան Քոնսթրաքշն>> ՍՊԸ <<Իզդիր Քոնսթրաքշն>> ՍՊԸ: Որոշմամբ առանձնացված հողամասերը կառուցապատման նպատակով տրամադրվել են վերոնշյալ կառուցապատող ընկերություններին: Քանի որ կառուցապատող ընկերությունները տարբեր են, <<Սիթի Սենթր Դիվելոպմենթ>> ՓԲ ընկերության կողմից հողամասերի նախագծման, կառուցապատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման աշխատանքներն իրականացվել են առանձին հատվածներով /լոտերով/: Սույն նախնական գնահատման հայտում դիտարկվել են Կենտրոն վարչական շրջանի 33-րդ թաղամասում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման աշխատանքները՝ 16 լոտերի համար:

Նշված ընկերություններին պատկանող, հասարակության և պետության կարիքների համար վերցվող տարածքները, որոնք նախատեսված են կենտրոն վարչական շրջանի թիվ 33 թաղամասի կառուցման համար, ներառում են Հանրապետության, ֆիրդուսի, Խանջյան և Զայկովսկու փողոցների և Տիգրան Մեծ պողոտայի հասցեներում գտնվող՝ շենքեր, բնակելի տներ, ավտոտնակներ և այլ շինություններ, իսկ որոշ հատվածներում նաև պատմամշակութային հուշարձաններ: Երևան քաղաքի 33-րդ թաղամասի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին 22 մարտի 2018 թվականի Հայաստանի Հանրապետության կառավարության N 332-Ն որոշման համաձայն պատմամշակութային հուշարձաններն ընդգրկված են «Բիրլիս Քոնսթրաքշն», «Տրապիզոն Քոնսթրաքշն», «Ակն Քոնսթրաքշն», «Մանազկերտ Քոնսթրաքշն», «Սասուն Քոնսթրաքշն» ՍՊ ընկերություններին կառուցապատման համար տրամադրված տարածքներում: Հուշարձանների ընդհանուր մակերեսների և ըստ լոտերի ընդգրկվածության ցուցանիշները ներկայացված են ստորև՝ 2.2 <<Կառուցվող թաղամասի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներ>> բաժնի <<Կառուցապատման մակերեսներն ըստ լոտերի>> աղյուսակում, իսկ այդ հուշարձանների նկարագրությունը ներկայացված է վերոհիշյալ N 332-Ն որոշման մեջ: Կենտրոն վարչական շրջանի թիվ 33 թաղամասում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման տարածքն ընկած է՝ Խանջյան, Հանրապետության, Բուզանդի փողոցների և Տիգրան Մեծ պողոտայի միջանկյալ հատվածում: Տարածքը ըստ հատագծերի բաղկացած է 19 լոտերից, որոնցից 3 լոտերի /4.2.5/ համար մշակվել է աշխատանքային նախագիծ և նախնական գնահատման հայտ: Սույն նախնական գնահատման հայտը վերաբերում է այն լոտերին, որոնց մասով ներգրավված են ձեռնարկողը և մնացած թվարկված ընկերությունները:

Տեղեկատվությունն ըստ լոտերի /հատվածների/ և իրավաբանական ընկերությունների ներկայացված է ստորև:

N/N	Կազմակերպություն	Լոտ N
1	<<Միթի Սենթր Դիվելոփմենթ>> ՓԲԸ	16
		15
2	<<Վան Քոնսթրաքշն>> ՍՊԸ	3
3	<<Էրզրում Քոնսթրաքշն>> ՍՊԸ	01, 1
4	<<Բայազետ Քոնսթրաքշն>> ՍՊԸ	6
5	<<Ուրմիա Քոնսթրաքշն>> ՍՊԸ	7
6	<<Տրապիզոն Քոնսթրաքշն>> ՍՊԸ	8
7	<<Դիարբեքիր Քոնսթրաքշն>> ՍՊԸ	9
8	<<Ակն Քոնսթրաքշն>> ՍՊԸ	
9	<<Մանազկերտ Քոնսթրաքշն>> ՍՊԸ	10-11
10	<<Սասուն Քոնսթրաքշն>> ՍՊԸ	12
11	<<Զեյթուն Քոնսթրաքշն>> ՍՊԸ	13

12	<<Բաբերդ Քոնսթրաքշն>> ՍՊԸ, <<Տարսոն Քոնսթրաքշն>> ՍՊԸ	14
13	<<Կարս Քոնսթրաքշն>> ՍՊԸ	17
14	<<Արդահան Քոնսթրաքշն>> ՍՊԸ	18
15	<<Իզդիր Քոնսթրաքշն>> ՍՊԸ	19

Կառուցապատման աշխատանքները թույլ կտան մասնավոր ներդրումների հաշվին իրականացնել քաղաքաշինական ծրագիրը՝ համադրելով հին Երևանի ճարտարապետական ոճն այժմյան կառուցվող շենքերի, շինությունների հետ, բացի այդ տարածքում արդեն իսկ մասնակիորեն կատարված են սեփականության իրացման աշխատանքներ:

Նախագծման և կառուցապատման համար հիմք են հանդիսացել Երևանի քաղաքապետի կողմից տրված՝ նախագծման թույլտվությունները /ճարտարապատահատակագծային առաջադրանքներ/, <<Սիթի Սենթր Դիվելոպմենթ>> ՓԲԸ-ին և այլ ընկերություններին պատկանող հողամասերի ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականները:

Փաստաթղթի մշակման նախապայմաններն են եղել.

- Թաղամասի կառուցապատման ծավալատարածական հորինվածքը ներդաշնակեցնել տարածքի լանդշաֆտային առանձնահատկություններին
- Թաղամասի տարածքում նախատեսել անհրաժեշտ սպասարկման հաստատություններ՝ հասարակական, սննդի, առևտրի, կենցաղային սպասարկման, մարզական և այլն
- Ներթաղային ճանապարհային ցանցը և շենքերի կառուցապատման կարմիր գծերի սահմանները նախագծել նորմատիվային պահանջներին համապատասխան
- Նախագծով լուծել դեպի թաղամասի տարածք ավտոտրանսպորտի անվտանգ ելումուտի, շենքերի և շինությունների սպասարկման խնդիրները, նախագծվող շենքերն ապահովել վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղերով
- Ռելիեֆային անկմամբ պայմանավորված՝ թաղամասում նախագծվող շենքերի և շինությունների տանիքների տեսողական առանձնահատկությունները հաշվի առնելով՝ հատուկ ուշադրություն դարձնել տանիքներին, նախատեսելով նյութի և գույնի միասնական, համահունչ լուծումներ, ինժեներական սարքավորումներ տեղադրելու պարագայում դրանք քողարկել համապատասխան ճարտարապետական լուծումներով
- Թաղամասի ճանապարհային ցանցը նախագծել, հաշվի առնելով հարևան հողամասերի հետագա կառուցապատման զարգացումը
- Նախագծման ժամանակ հաշվի առնել Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական, բնապահպանական, հաղորդակցության և տրանսպորտի խորհրդում հնչեցրած առաջարկություններն ու դիտողությունները
- Նախագծվող շենքերում նախատեսել ստորգետնյա հարկեր
- Կազմակերպել ջրահեռացում

- Բարեկարգել տարածքը:

Թաղամասը, բացի բնակարանային ֆոնդը, կունենա նաև կանաչապատ հանգստի գոտիներ, մանկապարտեզ, անհրաժեշտ կենցաղ-սպասարկման հաստատություններ՝ սննդի, առևտրի և հասարակական նշանակության և մարզական տարածքներ:

«Սիթի Սենթր Դիվելոպմենթ» ՓԲԸ մտադիր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Կենտրոն վարչական շրջանի 33-րդ թաղամասում /որում ներառված են 16 լոտերի հատվածները/ բնակելի և հասարակական շենքերով թաղամասի կառուցապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի համար ստանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն: Յուրաքանչյուր կառուցապատողի կողմից ըստ լոտերի կմշակվի վերջնական ճարտարապետա-շինարարական նախագիծ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, նախատեսվող գործունեության նախագծային փաստաթուղթը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 մ²-ը (կառուցապատվող հողամասի մակերեսը կազմում է 57 695², իսկ բնակելի թաղամասի շինությունների զբաղեցված մակերեսը՝ 43416 ք.մ:

Ելնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանից, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է Նախնական գնահատման հայտի պատրաստում: Նախնական գնահատման հայտի բովանդակությունը մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն նախնական գնահատման հատմ: Գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

- Օդային ավազանի աղտոտում՝ շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,
- Շինարարության փուլում մերձակա բնակչությանը /Երևան համայնք Մալաթիա-Սեփաստիա վարչական շրջան/ պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,

- Շինարարական մեքենաների և տեխնիկայի աշխատանքով պայմանավորված տեղի երթևեկության խափանում,

- Հողերի դեգրադացիա և էրոզիա բուսածածկի վնասման արդյունքում,
Հողերի և ջրային ռեսուրսների աղտոտում շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում առաջացող արտահոսքերով,

- Հողերի աղտոտում՝ շինարարության և շահագործման ընթացքում առաջացող թափոններով, շինարարական և կենցաղային աղբով,

- Աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ գործունեության իրականացման շինարարության և շահագործման ընթացքում:

Հայտում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչների վրա կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Նախնական գնահատման հայտի մշակման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- 33-րդ թաղամասի կառուցապատման նախագիծը որը ներառում է 16 լոտ/,
- Նախատեսվող գործունեության ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- Տարածքի վերաբերյալ վերլուծությունները, սխեմաները,
- Շահագրգիռ կողմերի հետ բանակցություններն ու քննարկումները:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- 33-րդ թաղամասի կառուցապատման նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակում,

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,

- Բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների ցանկ տեսաձայնագրություն) ներկայացում շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Երևան քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

Տարածքի և տարածքին մոտեցնող ճանապարհների որվագիծը



1.1 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում բնակելի և հասարակական շենքերով թաղամասի /<<Վերածնունդ>> երիտասարդական ավանի/ կառուցապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը

հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթասթեղնային ակտով:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի,

պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.2 Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում <<Սիթի Սենթր Դիվելոպմենթ>> ՓԲ ընկերությունը:

Քանի որ կառուցապատող ընկերությունները տարբեր են, <<Սիթի Սենթր Դիվելոպմենթ>> ՓԲ ընկերության կողմից հողամասերի նախագծման, կառուցապատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման աշխատանքներն իրականացվել են առանձին հատվածներով /լուծելով/: Սույն նախնական գնահատման հայտում դիտարկվել են Կենտրոն վարչական շրջանի 33-րդ թաղամասում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման աշխատանքները 5.75 հա տարածքի համար, որում ներառված են 16 լոտերի կառուցապատվող հատվածները: Յուրաքանչյուր լոտի կառուցապատվող հատվածի համար,

շինհրապարակին ներկայացվող պահանջներին համապատասխան ձևավորվելու է շինարարական հրապարակ, ընդհանուր 16 հատ:

Նշված ընկերություններին պատկանող, հասարակության և պետության կարիքների համար վերցվող տարածքները, որոնք նախատեսված են կենտրոն վարչական շրջանի թիվ 33 թաղամասի կառուցման համար, ներառում են Հանրապետության, Ֆիրդուսի, Խանջյան և Զայկովսկու փողոցների և Տիգրան Մեծ պողոտայի հասցեներում գտնվող՝ շենքեր, բնակելի տներ, ավտոտնակներ և այլ շինություններ, իսկ որոշ հատվածներում նաև պատմամշակութային հուշարձաններ: Պատմամշակութային հուշարձաններն ընդգրկված են «Բիթլիս Քոնսթրաքշն», «Տրապիզոն Քոնսթրաքշն», «Ակն Քոնսթրաքշն», «Մանազկերտ Քոնսթրաքշն», «Սասուն Քոնսթրաքշն» ՍՊ ընկերություններին կառուցապատման համար տրամադրված տարածքներում: Նշված տարածքներում շինհրապարակները կազմակերպելիս հաշվի կառնվեն նաև պետական լիազոր մարմնի կողմից առաջարկված ընթացակարգերը: Կենտրոն վարչական շրջանի թիվ 33 թաղամասում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման տարածքն ընկած է՝ Խանջյան, Հանրապետության, Բուզանդի փողոցների և Տիգրան Մեծ պողոտայի միջանկյալ հատվածում: Ընկերություններին սեփականության վկայականներով հատկացված հողամասի սահմաններում, 5.75 հա /կամ 57.500 քմ/ տարածքի վրա, կառուցվելու է է բնակելի և հասարակական շենքերով թաղամաս, ինչպես նաև ներթափային ճանապարհային ցանց:


Ֆիրդուսի թաղամասը գտնվում է Երևանի կենտրոնում շրջապատված գլխավոր պողոտայի, Տիգրան Մեծ, Հանրապետության, Խանջյան փողոցներով: Տարածքը փողոցների եզրագծով հիմնականում կառուցապատված է բնակելի և հասարակական շենքերով, իսկ կենտրոնական հատվածը, որտեղ գտնվում է տարերայնորեն հատվածը ձևավորված “Ֆիրդուս” շուկան, նեղ, ծուռումուռ, փրկարարական մեքենաների համար անանցանելի փողոցներով՝ կառուցապատված 1-2 հարկանի խարխված վթարային կառույցներով: Տարածքի կենտրոնական հատվածում գտնվում է 3 բազմաբնակարան շենք՝ կառուցված 40-ական թվականներին:


Ֆիրդուսի թաղամասի տարածքի մեծ մասը մինչև 1015թ կառուցապատման նախագծի համաձայնեցումը տարբեր քաղաքաշինական ծրագրերից ելնելով իրացվել է և ապամոնտաժվել: Թաղամասը հյուսիսից հարավ ունի նիշերի անկում 8.0 մետր Հանրապետության փողոցից Խանջյան ֆողոց: Արևելքից Արևմուտք 40 մետր քաղաքապետարանի 2-րդ Մասնաշենքից Տիգրան Մեծ փողոցով:

Կառուցապատվող տարածքում առկա են ամբողջությամբ քանդման ենթակա անկանոն կառուցապատված ցածրահարկ շինություններ: Հողամասը ձեռքբերողները պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում սեփականատերերից և պետությունից ձեռք կբերեն անշարժ գույքը: Քանդման աշխատանքները կիրականացվեն օրենսդրական պահանջներին համապատասխան, քաղաքապետարանի կողմից տրված քանդման թույլտվության համաձայն: Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրի է,

իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման: Տարածքում բացակայում է պահեստավորման ենթակա բուսահողը և հատման ենթակա ծառերը:

Նախագիծը մշակվել է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականներով հատկացված հողամասի սահմաններում /որը ըստ լոտերի և կառուցապատման հատվածների սեփականության իրավունքով պատկանում է տարբեր ընկերությունների/ և ընդհանուր զբաղեցնում է 5.75 հա մակերես:





2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՉՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

2.1 Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ

Կենտրոն վարչական շրջանի թիվ 33 թաղամասում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման տարածքն ընկած է՝ Խանջյան, Հանրապետության, Բուզանդի փողոցների և Տիգրան Մեծ պողոտայի միջանկյալ հատվածում: Ընկերություններին սեփականության վկայականներով հատկացված հողամասի սահմաններում, 5.75 հա /կամ 57.500 քմ/ տարածքի վրա, կառուցվելու է Է բնակելի և հասարակական շենքերով թաղամաս, ինչպես նաև ներթափային ճանապարհային ցանց: Երևանի Թիվ 33 (ֆիրդուսի) թաղամասի մանրամասն կառուցապատման նախագծի համար հիմք է հնդիսացել Հ.Հ. քաղաքաշինության Պետական կոմիտեի և Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցված թիվ 33 թաղամասի կառուցապատման նախագիծը, որտեղ ամրագրված են իրացման գոտու սահմանները և մակերեսը, ճանապարհային ցանցի ուրվագիծը, կառուցապատման լոտերի բաժանման սխեման հարկայնության և կառուցապատման չափորոշիչները: Հողամասում առկա են ձեռք բերման և ամբողջությամբ քանդման ենթակա կառուցապատված շենք շինություններ, որոնց հետ կապված գործընթացները կիրականացվեն իրավական փաստաթղթերով սահմանված կարգով և ժամկետներում: Տարածքում առկա քանդման ենթակա կիսաքանդ շինությունները, նախապես Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրվող քանդման թույլտվությունների համաձայն կքանդվեն, իսկ քանդման աշխատանքների ընթացքում առաջացող շինադիր և թափոնները անմիջապես կտեղափոխվեն Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայրեր:

Ըստ համաձայնեցված կառուցապատման նախագծի կոմպոզիցիոն առանցք է ծառայում 80.0 մ տրամագծով հետյոտն հրապարակը և Ֆիրդուսու պարփակված տարածքը բացել ճանապարհներով եռաճառագայթ լուծմամբ դեպի գլխավոր պողոտա, Օղակաձև այգի՝ Խանջյան փողոց և Տիգրան մեծ պողոտա:

Որպես կառուցապատման բարձրության չափանիշ ընդունված է կենտրոնական հատվածի՝ կլոր հրապարակի եզրափակող շենքերի համար 16 հարկ, նահանջող երկհարկանի վերնահարկով՝ մինչև 60-65մ բարձրությամբ, որոնց առաջին և երկրորդ հարկերը նախատեսված է հանրային օգտագործման համար՝ ռեստորաններ, ցուցասրահներ, առևտրային տարածքներ: Համապատասխանաբար 4.20և 3.90մ բարձրություններով , իսկ մնացած հարկերում բնակելի, հյուրանոցային և գրասենյակային մակերեսներ:

Հանրապետության փողոցի և Տիգրան մեծ պողոտային ետնամասում 8 հարկ և ետնահանջ վերնահարկ մինչև 31մ բարձրությամբ, որոնց առաջին և երկրորդ հարկերում

նույնպես նախատեսվում է հասարակական օգտագործման տարածքներ՝ սրճարաններ, առևտրական տարածքներ, արվեստանոցներ, ցուցասրահներ և այլն:

Խանջյան փողոցի ետնամասի գոտում 16 հարկանի մինչև 60,0մ բարձրությամբ, իսկ Խանջյան փողոցի վրա մինչև 14 հարկանի կետային կառույց:

Կլոր հրապարակի և բոլոր շենքերի տակ նախատեսվում է ստորգետնյա եռահարկ, իսկ մետրոյի հատվածում երկհարկ ավտոկայանատեղի:

Հանրապետության, Տիգրան Մեծ և Խանջյան փողոցներից կազմակերպվում է ստորգետնյա կայանատեղի, որոնց մուտքերն ու ելքերը թեքուղիների միջոցներով:

Ճանապարհային ստորգետնյա հատվածի վերին նիշերերում տեղադրված են կոմունիկացիոն թունելներ՝ կոյուղու ջրի, էլեկտրոսնուցման, ռոտզման համար նաև տարածքի տրանսֆորմատորային ենթակայանների համար:

Մասնաշենքերի որպես 0.000 պայմանական նիշ է ընդունվել առաջին հարկի հասարակական սպասարկման տարածքի հատակի հարդարման շերտի վերին նիշը:

Նախագծվող մասնաշենքերը իրար հարևանությամբ տեղադրվող առանձին բարձրահարկ բազմաբնակարան շենքեր են՝ որոնք թեև 0.00 նիշից ցած գտնվող ավտոկայանատեղիների ներքին լուծումներով միավորվում են սակայն նախատեսված դեֆորմացիոն կարանով կոնստրուկտիվ տեսակետից բաժանվում են իրարից:

Առաջին հարկը նախատեսվում է օգտագործել որպես հասարակական սպասարկման տարածք, մնացած հարկերը բնակելի են: Նախատեսված է նաև տեխնիկական նպատակային նշանակության հարկ ինժեներական ենթակառուցվածքների համար: Բնակելի հարկերի և ավտոկայանատեղիների բարձրությունը 3.30մ է, իսկ հասարակական սպասարկման հարկերի բարձրությունը 6.00մ: Համալիրի նկուղային երկու հարկերում տեղադրված է ավտոկայանատեղի: Ստորգետնյա ավտոկայանը նախատեսված է ոչ գազաբալոնային սարքավորումներով մեքենաների կայանման համար:

Թաղամասի տարածքում նախատեսված է անհրաժեշտ սպասարկման հաստատություններ, այդ թվում՝ հասարակական սննդի, առևտրի, կենցաղային սպասարկման, մարզական և այլն: Կառուցապատվող տարածքին մոտեցումը կապահովվի առկա ճանապարհներով, որոնք անցնում են հողամասի տարբեր կողմերով: Բնակելի և հասարակական շենքերով թաղամասի համար նախատեսվում է կառուցել ներթաղային ճանապարհային ցանց: Ճանապարհների բանուկ մասը նախագծված է 70 մ լայնությամբ երկկողմանի երթևեկության համար, կողային հատվածներում ունենալով գրպանիկներ մեքենաների ժամանակավոր կայանման համար: Ճանապարհներն ու մայրերը անջատված են կանաչ գոտիներով: Թաղամասի ճանապարհների արտաքին եզրերով նախատեսված է ուղղիներ հեծանվորդների համար: Կառուցապատման կարմիր գծերի միջով եղած հեռավորությունը 24.0 մ է:

Շենքերի արտաքին հարդարումը նախատեսվում է իրականացնել կախովի երեսպատումով, իսկ արտաքին պատերը՝ ջերմամեկուսացված են: Արտաքին պատուհանները և դռները նախատեսված են հրակայուն և ամրակայուն ապակիներից:

Շենքի արտաքին հարդարման համար օգտագործվում են սև տուֆ քարը, Ղարաբաղի երկու նրբերանգներով սպիտակ մարմարը /տրավերտին/ ինչպես նաև ապակու և դեկորատիվ սվաղների համադրությունը:

Ծածկերը Ե/Բ միաձույլ սալեր են, միջնորմները՝ պեմզաբլոկ, գիպսաստվարաթուղթ: Տանիքը՝ հարթ-համատեղված, ճկուն փաթեթցային ծածկույթով և կազմակերպված ջրահեռացումով: Հատակները նախատեսվում է կառուցել բոլոր միջհատակային հաղորդագծերը տեղադրելուց հետո:

Տանիքը հարթ է՝ կազմակերպված ներքին ջրահեռացումով:

Թաղամասի կառուցապատվող տարածքների մեջ մտնում են նաև ներթաղամասային ճանապարհները: Այդ տարածքներում նախատեսվում են և ակտիվ և պասիվ հանգստի գոտիներ, առանձնացված են հեծանվային ուղիներ:

Շենքերի առաջին հարկերը նախատեսված են որպես ժամանցի, կենցաղային, բնակչության սպասարկման տարածքներ:

Մասնաշենքերի հարկայնության համար գործող շինարարական նորմերի պահանջների համապատասխան, բնակարանների էլքերը նախատեսված են առաջին տիպի չծխացող աստիճանավանդակների միջոցով: Բաց պատշգամբերի դռները և պատուհանները նախատեսվում է իրականացնել հրակայուն շրջանակներով և ապակե փաթեթներով:

Բնակելի հարկերի ընդհանուր օգտագործման միջանցքներից սարքավորված կլինեն ծխահեռացման համակարգով: Բնակարաններում նախատեսված են ինքնաշխատ ծխային հրդեհային ազդարարարման սարքերով:

Միջանցքներից ծխահեռացումը նախատեսվում է իրականացնել մեկ ժամից ոչ պակաս հրակայունության սահման ունեցող նյութերից պատրաստված հատուկ հորաններով, ծխի հարկադիր արտածումով, ինչը կատարվում է բոլոր հարկերում տեղադրված ծխահեռացման կափույրների միջոցով:

Բնակելի շենքերի դասավորությունը պայմանավորված է հողամասի դիրքով, հեռավորությունների նորմատիվ պահանջներով, բնական լուսավորության հաշվարկներով:

Վերելակները յուրաքանչյուր շենքում կլինեն երկուսը՝ 400 և 1000 կգ բեռնաբարձությամբ: Նրանցից 1000 կգ-անոցը նախատեսված է հրշեջ ստորաբաժանում տեղափոխելու համար:

Մեքենաների մուտքը ստորգետնյա ավտոկայանատեղի նախատեսված է երկկողմանի՝ բաց թեքահարթակներով, լուսացույցային կարգավորումով:

Նախագծով նախատեսված է արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ:

Բնակարանների մակերեսները և հատակագծային լուծումները համապատասխանում են պատվիրատուի կողմից տրված առաջադրանքին:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերին հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Շենքերի սեյսմազինվածության մակարդակը նախատեսված սեյսմիկ - III գոտու համար (9 Բալ և ավելի):

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերին հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Բնակելի թաղամասի արտաքին ինժեներական ցանցերի համար կմշակվեն վերջնական նախագծերը /ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում/: Ինժեներական ցանցերի միացումն իրականացվելու է նշված ծառայությունները մատուցող կազմակերպությունների կողմից տրամադրված տեխնիկական պայմաններին համաձայն /ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում/:

Թաղամասի ջրամատակարարումն իրականացվելու է տարածքի հարևանությամբ անցնող քաղաքային ջրատարից, կոյուղին կմիացվի քաղաքային կոյուղատարին:

Նախագիծը մշակված է համաձայն ՀՀ տարածքում գործող հետևյալ նորմատիվային փաստաթղթերի՝

Բոլոր շինությունների շինարարական աշխատանքներն իրականացնվելու են միաժամանակ: Ըստ նշված բնութագրի ՄՆԻՊ 1.04.03-2008-ի նորմատիվներով հաշվարկված է 4 տարի 48 ամիս շինարարության տևողություն, այդ թվում 3 ամիս նախապատրաստական փուլ:

ՀՀՇՆ 30-01-2014 քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում

ՀՀՇՆ 31-01-2014 Բնակելի շենքեր. Մաս1 .Բազմաբնակարան Բնակելի Շենքեր

ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի Եվ Շինությունների Հրդեհային Անվտանգություն

ՀՀՇՆ IV-11.03.03-02 Ավտոկայանատեղեր

Կառուցապատման վերաբերյալ ընդհանուր ցուցանիշները բերված են ստորև:

2.2. Կառուցվող թաղամասի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներ**ՏԱՐԱԾՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

ա .	Իրացման գոտու մակերեսը	57676,18 քմ
բ .	Բաժանված լոտերի քանակը	19 լոտ (որից 16-ի համար մշակվել է սույն նախնական գնահատման հայտը)

	Լոտի Մակերես / քմ
1	489,74 քմ (ներառյալ Լոտ 01-ը)
3	695,10 քմ
6	427,59 քմ
7	1551,03 քմ
8	2315,79 քմ
9	1780,53 քմ
10	2299,20 քմ
11	2237,28 քմ
12	2323,22 քմ
13	1077,17 քմ
14	2703,11 քմ
15	1980,07 քմ
16	4994,10 քմ
17	5153,03 քմ
18	4974,81 քմ
19	1634,11 քմ

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՆ ԸՍՏ ԼՈՏԵՐԻ


	ԼՈՏԵՐ	ԿԱՌՈՒՑ. ՄԱԿԵՐԵՍ	ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԵՂ ՀՈՒՇԱՐՁԱՆ ՇԵՆՔԵՐ	ՀՈՒՇԱՐՁԱՆԱՅԻՆ- ԻՄԻՏԱՑԻՈՆ ՄՈՏԵՑՄԱՍԲ ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ՀԻՆ՝ 18-ՐԴ ԴԱՐԻ ՈՃԱՅԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ընդամենը
1	2,1,4	1517	486,5		2003,50
2	3	608,0			608,00
3	6-7	1127,00		225,3	1352,30

4	8	576,46		380,9	957,36
5	9	527,00		394,0	921,00
6	11	878,0	233		1111,00
7	10	410	440		850,00
8	12	813,5	510		1323,50
9	13	800			800,00
10	14	1260			1260,00
11	15	1212,5			1212,50
12	16	2166,56			2166,56
13	17	2446,5			2446,50
14	18	2364,5			2364,50
15	19	620,0			620,0
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ					19 376,72

ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ			
		Մակերես / քմ	%
1	Իրացման գոտու մակերես	57676,18քմ	
2	Ընդհանուր կառուցապատման մակերես	19376,72քմ	33,60%
3	Ճանապարհների մակերես	10233,15քմ	17,74%
4	Մայթեր և Հեծանվուղիներ	9916,0քմ	17,2%
5	Կլոր հրապարակը	5381,0քմ	9,3%
6	Կանաչ գոտիներ, գազոններ	11600,0քմ	20,11%
7	Վերգետնյա հատվածը մինչև	30մ	
	մինչև	45մ	
	մինչև	60մ	
	մինչև	87մ	

Ստորգետնյա հատված՝ ավտոկայանատեղիներ՝ 3 հարկ, 2 հարկ մետրոյի հատվածում:







2.3 Նախապատրաստական և քանդման աշխատանքներ

Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները: Տարածքում իրականացնել քանդման աշխատանքներ և տարածքը մաքրել քանդման արդյունքում առաջացող շինարարական աղբից և ապամոնտաժվող տարրերից, բուսական նմացորդներից, որոնք ժամանակավոր հավաքվում է հատակագծում նշված տարածքներում: Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- պահեստային և մոնտաժային հարթակների կարգավորում,
- վարչակենցաղային և սանիտարահիգիենիկ տարածքների կարգավորում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անիվների լվացման կետի տեղադրում,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Քանդման աշխատանքներն իրականացվելու են փուլերով: Ապամոնտաժման եղանակով քանդվում են ծածկերի սալերը: Ձեռքի մեքենայացված և պարզ գործիքներով քանդվում են շարվածքները: Քանդման աշխատանքների համար որպես հիմնական ամբարձիչ մեխանիզմ առաջարկվում է հիդրավլիկ՝ հեռասկոպիկ սլաքով մոբիլային KC-5473 Диепр կոունկը, KOMATSU PC 450LCD-7 բազմաֆունկցիոնալ էքսկավատորի կիրառումը, որն ունի տարբեր նշանակության ծայրային գործիքներ: Շինարարական աղբը հեռացվում է վերամբարձ մեխանիզմի կեռիկին ամրացված տարողությունների միջոցով:

Հավաքված շինաղբը և ապամոնտաժված շինարարական թափոնները գնահատվում է երկրորդային օգտագործման համար ոչ պիտանի և ինքնաթափերի միջոցով անմիջապես կտեղափոխվեն Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված համայնքային աղբավայրեր: Բնութագրվող տարածքի ազատ երթևեկելի գոտիներում ներկայացված է ասֆալտապատ ծածկույթով, որը գտնվում է կիսաքանդ և քայքայված վիճակում, քանդվող ասֆալտը առանց պահեստավորման կտեղափոխվի համապատասխան աղբավայր, կամ կհանձնվի այդ թափոնը վերամշակող կազմակերպություններին:

Ներկայացվող գործունեության նախաշինարարական փուլում շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է կազմակերպել շինհրապարակ՝ ցանկապատով և այլ անհրաժեշտ ենթակառույցներով:

1. Մինչ շինարարական հրապարակում որևէ աշխատանքի կատարելը պետք է համապատասխան կազմակերպությունների հետ համաձայնեցված /ենթակառուցվածքի սեփականատեր/ ստանալ թույլտվություններ՝ տարածքով անցնող ինժեներական կոմունիկացիաների անջատման, կամ տեղափոխման վերաբերյալ:
2. Կազմակերպել շինհրապարակ՝ ցանկապատով և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներով:
3. Տարածքը մաքրել շինարարական աղբից և ապամոնտաժված տարրերից, որոնք ժամանակավոր հավաքվում են յուրաքանչյուր շինհրապարակի հատակագծում նշված տարածքներում, որտեղից բարձվում ինքնաթափեր և տեղափոխվում Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր, կամ ժամանակավոր պահման վայր:
1. Տարածքում գոյություն ունեցող շինությունների ապամոնտաժման աշխատանքներ և ապամոնտաժման արդյունքում առաջացող թափոնների տեղափոխում հատկացված վայր:

Համաձայն գործող նորմերի, կիրականացվի ժամանակավոր ցանկապատում մետաղական թիթեղներով ապահովելով առողջության և աշխատանքի անվտանգության պայմանները, և կիրականացվեն շինարարական հրապարակի կազմակերպման աշխատանքներ, մասնավորապես՝ շինհրապարակի լուսավորության ապահովման միջոցառումները և ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան աշխատողների աշխատանքային պայմանների ապահովման միջոցառումներ, այդ թվում՝ ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքներ՝ ապահովելով շինարարական հրապարակում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների համար ջուր, կենցաղային կեղտաջրերի հեռացման լուծումներ, աշղեկի աշխատասենյակ և այլն): Խմելու ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ցանցից, իսկ կեղտաջրերի հեռացման համար յուրաքանչյուր շինհրապարակում կտեղադրվի բիոգուգարան: Նախաշինարարական փուլում կիրականացվեն նաև կոմունիկացիաների վերատեղադրման և տեղափոխման աշխատանքները և վերջիններիս միացման աշխատանքները գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Կազմակերպվել է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Սույն հայտի փաթեթին կից ներկայացվում է նաև Հանրապետության 30/1 և 30/3 հասցեներում գտնվող շինությունների քանդման նախագիծը՝ որպես նախագիծ փուլ և որպես օրինակ: Այս և մյուս նախատեսվող քանդման աշխատանքների մանրամասն նախագծային փաստաթղթերը կտրամդրվի համապատասխան կապալառու/ներին, որոնց հիման վրա շինարարական մեխանիզմների և աշխատողների տեղաշարժի նախագիծը կմշակվի կապալառու կազմակերպություն/ների կողմից՝ համաձայնեցնելով պատվիրատուի և նախագծային ընկերության հետ:

2.4 Հողային աշխատանքներ

Շինարարության ընթացքում մշակման ենթակա գրունտերը պատկանում են III, VI կարգի: Գրունտերի մշակումը փոստրակում և խրամուղիներում իրականացվում է “հետ-բահ” եքսկավատորով: Մաքրամշակումը իրականացվում է ձեռքով բանվորական ուժի օգնությամբ: Բնահողի տեղափոխման համար ընտրված է ավտոինքնաթափ 7.5տ բեռնունակությամբ: Հետլիցքի իրականացման համար օգտագործվում են գրունտի փափուկ բնահողերը: Հիմքերի, հարթակների և հատակների հետլիցքը իրականացվում է բանվորական ուժի օգնությամբ՝ տեղափոխելով գրունտը սայլակներով մոտ 5-20մ: Հետլիցքը նախատեսվում է խտացնել ձեռքի պնեվմատոփիչներով:

Շինարարական աշխատանքների ժամանակ շինհրապարակից հանվող հանույթի, մշակվող գրունտի ծավալը ընդհանուր կկազմի 55.000 մ³, հետլիցքի ծավալը կկազմի՝ 5 000 մ³:

Հիմքերի փորման ժամանակ առաջացած մնացորդային հողային գրունտը, առանց պահեստավորման կտեղափոխվի համապատասխան աղբավայր Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

2.5 Շինարարական աշխատանքների կատարման սխեմա

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքերի շինարարությունը ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի: Բոլոր տիպի շինարարական աշխատանքները անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները ըստ ՍՄԻՊ III-IV. 2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Հողային աշխատանքները փոստրակում և խրամուղիներում կատարվում են “հետ-բահ” եքսկավատորով: Բնահողը տեղափոխվում է ավտոինքնաթափերի միջոցով՝ 13-15 կմ հեռավորության վրա: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի

պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով: Հետ լիցքի համար պահանջվող բնահողը բերվում է 13-15 կմ հեռավորությունից:

Յուրաքանչյուր շենքի պատող և կրող կոնստրուկցիաների իրականացման համար ընտրված է աշտարակային կոունկ՝ КБ-405 մակնիշի: QTZ-80 երկու աշտարակային կոունկերի սլաքի բարձրությունների միջև պահպանել 2.5մ բարձրություն (հաշվի առնելով անվտանգությունը): Աշտարակային կոունկի մոնտաժումը և ապամոնտաժումը կատարել համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության կողմից:

Շինհրապարակում ոչինչ չի պատրաստվում, ամեն ինչ բերվում է պատրաստի վիճակում, մասնագիտացված կազմակերպություններից: Շինհրապարակում ոչինչ չի պահեստավորվում: Առաջացող բոլոր տեսկի թափոնները և մնացորդային գրունտը առանց պահոստավորվելու տեղափոխվելու են համապատասխան աղբավայրեր, կամ հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպությունների, կրկնակի օգտագործման համար:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք կատարել պահպանելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Քարերի, մետաղական կոնստրուկցիաների և այլ նյութերի մատուցումը տեղադրման հարթակ իրականացվում է 32 տ բեռնատարողություն ունեցող ավտոամբարձիչի օգնությամբ, որի տեխնիկական պայմանները թույլ են տալիս (առավելագույն 3տ բեռնունակությամբ սլաքի շառավիղը 15 մ մասնաշենքի) նոր շինարարության աշխատանքների իրականացումը:

Ամբարձիչի մեքենավարը կարող է դադարեցնել աշխատանքը, եթե կհայտնաբերվեն ամբարձիչի կոնստրուկցիայի ճաքեր և դեֆորմացիաներ, ճուպանի կտրվածք, արգելակման խախտումներ և այլն:

Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա թեքություն ոչ ավել քան 5°:

Բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը, որոնք օգտագործվում են բեռնման–բեռնաթափման աշխատանքների ժամանակ, պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին: Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն շննկ III-4-80* <Անվտանգության տեխնիկական շինարարության մեջ>:

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ ինքնաթափերի միջոցով: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարական հրապարակում չի նախատեսվում շինանյութերի, կամ սորուն նյութերի պահեստներ:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Ամբողջ շինարարության ընթացքում կատարել միջոցառումներ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Թույլ չտալ թունավոր արտանետումների նորմայից ավել քանակություններ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Փոշուց գերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և ապահովել ոռոգման ջրով:

Թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին, 18 00-ից հետո դադարեցմել աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի շինարարական թափոնները և մնացորդային գրունտները տեղադրվելու են քաղաքապետարանի կողմից սահմանված աղբավայրերում:

Յուրաքանչյուր շինհրապարակում անիվների լվացման համար տեղակայվելու է սարք: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով շինհրապարակի տարածքը լքելուց առաջ: Լվացման սարքից հեռացվող ջուրը հավաքվում է երկհատվածանի /երկսեկցիանի/ պարզարանում, որտեղ ջուրը գտվում է մեխանիկական մասնիկներից, յուղային մասից և պոմպի միջոցով վերադարձվում է լվացման սարք, այսպիսով ապահովելով լվացման շրջանառու եղանակ և բացառելով աղտոտված ջրերի արտահոսքը:

Շինարարական աշխատանքների ընթացքում վտանգավոր թափոնների առաջացումը և հնարավոր ազդեցությունները բացառելու նպատակով շինարարության ընթացքում քսայուղերը, հեղուկ վառելիքը կպահվեն փակ տարաներով և անթափանց հիմքերի վրա (բետոնե, մետաղական կամ ավազե), ինչը կբացառի հողային շերտի հնարավոր աղտոտումը: Շինաշխատանքների ավարտից հետո նշված նյութերի մնացորդային քանակները որպես երկրորդային նյութ կօգտագործվեն շինարար կապալառուի կողմից այլ աշխատանքներում:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Նախնական գնահատման հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

2.6 Շինարարության կազմակերպում

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը: Շինարարության տևողությունը կազմում է 4 տարի, կամ 48 ամիս՝ շինարարության թույլտվության տրամադրման օրվանից:

Սույն նախնական գնահատման հայտում դիտարկվել են Կենտրոն վարչական շրջանի 33-րդ թաղամասում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման աշխատանքները 5. 75 հա տարածքի համար, որում ներառված են 16 լոտերի կառուցապատվող հատվածները: Յուրաքանչյուր լոտի կառուցապատվող հատվածի համար, շինհրապարակին ներկայացվող պահանջներին համապատասխան ձևավորվելու է շինարարական հրապարակ, ընդհանուր 16 հա:

Պատմամշակութային հուշարձաններն ընդգրկված են «Բիթլիս Քոնսթրաքշն», «Տրապիզոն Քոնսթրաքշն», «Ակն Քոնսթրաքշն», «Մանազկերտ Քոնսթրաքշն», «Սասուն Քոնսթրաքշն» ՍՊ ընկերություններին կառուցապատման համար տրամադրված տարածքներում: Նշված տարածքներում շինհրապարակները կազմակերպելիս հաշվի կառնվեն նաև պետական լիազոր մարմնի կողմից առաջարկված ընթացակարգերը: Շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վաճակալել դրանք այլ կազմակերպություններից:

Շինարարության ընթացքում բանվորները կսնվեն հատուկ ճաշարան-տնակում:

Շինարարական աշխատանքներում աշխատողների ընդհանուր թիվը կկազմի 114 մարդ, որից

բանվորներ	- 114 մարդ
ինժեներներ/տեխնիկական	- 25 մարդ
ծառայողներ	- 3 մարդ
այլ աշխատողներ	- 4 մարդ:

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները. Շինարարության ընթացքում բանվորները կսնվեն հատուկ ճաշարան-տնակում: Շինարարությունը տևելու է 4-5 տարի: Շինարարության ընթացքում անհրաժեշտ հիմնական մեքենաների և մեխանիզմների ցանկը ներկայացված է ստորև աղյուսակում:

Հիմնական մեքենաների և մեխանիզմների քանակ

Շինարարությունը իրականացվելու է ընկերությանը պատկանող հետևյալ մեքենա-մեխանիզմներով.

1. Էքսկավատորներ
2. Ինքնաթափ ավտոմեքենաներ
3. Ավտո և աշտարակային կռունկներ
4. Բետոնախառնիչ ավտոմեքենաներ և այլն:

2.7 Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրապահանջը

Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և տեխնիկական պայմանների համաձայն: Քանի որ գործունեությունն իրականացվում է կառուցապատվող տարածքներում, ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերն առկա են:

Շինհրապարակներում շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ ջրօգտագործումը կիրականացվի յուրաքանչյուր շինհրապարակի հարևանությամբ գործող ջրամատակարարման ցանցից: Իսկ կենցաղային կեղտաջրերի հեռացման համար շինհրապարակում տեղադրվելու է բիոգուգարան: Ջրամիացում իրականացվելու է <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ կողմից տրվող տեխնիկական պայմաններին համապատասխան:

Ջրամիացման և ջրահեռացման կետերը յուրաքանչյուր շինհրապարակի համար կորոշվեն վերջնական նախագծի և շինարարության կազմակերպման նախագծի հաստատումից հետո, համաձայնեցված <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ հետ:

Ջրամիացումն իրականացվելու է նախագծված տարածքի հարևանությամբ՝ անցնող քաղաքային ջրագծից: Ջրահեռացման միացման կետը կլինի տարածքի հարևանությամբ նույն փողոցում գործող կոյուղագիծը:

Շինհրապարակներում աշխատողների կենցաղային կեղտաջրերի համար նախատեսված է բիոգուգարան, որը շարժական է և կարող է տեղափոխվել տարբեր շինհրապարակներ:

Ջրաչափական հանգույցի և հի հիդրանտի տեղադրման կետերում կառուցվելու է դիտահորեր:

Ջրատարում վթարների և վերանորոգումների ժամանակ ջրամատակարարման անընդհատությունը ապահովվելու, ինչպես նաև ներքին հակահրդեհային ջրաքանակ ապահովվելու համար նախատեսվում է պահուստային բաքի տեղադրում, որը միաժամանակ կարգավորող դեր կատարում է:

Փոշենստեցման նպատակով ջուրը կբերվի ջրատար մեքենայով կնքվելիք պայմանագրերի համաձայն՝ համաձայնեցված Երևանի քաղաքապետարանի հետ: Ջրցանի համար ջրաղբյուրը պարզ կլինի Երևանի քաղաքապետարանի կողմից տրվող Շինթույլտվությունից հետո:

Ներքին տաք, սառը ջրամատակարարում և տաք ջրի շրջադարձ

Ներքին ջրամատակարարման ցանցերը նախատեսվում է իրականացնել պոլիպրոպիլենե խողովակներով:

Նախագծով նախատեսվում է կենցաղային խմելու և հրդեհաշիջման միասնական համակարգ: Արտաքին հրդեհաշիջման համար նախատեսվում է հակահրդեհային հիդրանտ: Ներքին հրդեհաշիջման համար հարկերում հակահրդեհային կանգնակների վրա,

համապատասխան խորշերում տեղադրվում են հակահրդեհային արկղեր, որոնցից յուրաքանչյուրի մեջ կանգնակի վրա տեղադրում է փական հակահրդեհային ծորակով, ռետինե խողովակ, հրշեջ փող և 2 ձեռքի կրակմարիչներ:

Ներքին և արտաքին ջրահեռացում՝ կոյուղի

Շենքերի կոյուղաջրերը կհեռացվեն միասնական ինքնահոս համակարգով՝ կանգնակների միջոցով: Շենքից կոյուղաջրերը կլցվեն կոյուղու երկաթբետոնե դիտահորերի մեջ, որից հետո արտաքին ցանցով միացվում է տարածքի հարևանությամբ գործող կոյուղագծի դիտահորին՝ համաձայն տեխնիկական պայմանի:

Արտաքին կոյուղագիծը նախատեսվում է իրականացնել պոլիթիլենե խողովակներով: Կոյուղագծի հանգուցային կետերում և անկյունների վրա նախատեսվում են դիտահորեր:

Կոյուղու ելքագծերի հորիզոնական հատվածների համապատասխան հեռավորությունների վրա նախատեսվում են մաքրիչներ: Կոյուղագծերի և ելքագծերի հորիզոնական հատվածներն ունեն համապատասխան թեքություններ համապատասխանաբար դեպի կանգնակներ և դիտահորերը:

Ջեռուցում և գազամատակարարում

Համաձայն նախնական տեխնիկական քննարկումների և համաձայնեցված լուծումների, բազմաֆունցիոնալ համալիրի ջեռուցումը և տաք ջրամատակարարումը բնակարաններում և տարածքներում իրականացվում է անհատական կաթսաների միջոցով: Գազամատակարարումը իրականացվում է քաղաքային ցանցից՝ տեղադրելով գազամատակարարման բաշխիչ-վահանակ:

Բոլոր մասնաշենքերի գազամատակարարման խողովակներն անցնում են ստորգետնյա հատվածով, շենքի մոտ բարձրանալով մտնում են սանդղավանդակին կից պատշգամբ, որտեղ ամեն հարկում տեղադրված են գազի հաշվիչները բնակարանների համար:

Գազամատակարարումը իրականացվում է քաղաքային ցանցից՝ տեղադրելով գազամատակարարման բաշխիչ-վահանակ: Բոլոր մասնաշենքերի գազամատակարարման խողովակներն անցնում են ստորգետնյա հատվածով, շենքի մոտ բարձրանալով մտնում են սանդղավանդակին կից պատշգամբ, որտեղ ամեն հարկում տեղադրված են գազի հաշվիչները բնակարանների համար:

Վերջնական նախագծում հնարավոր են որոշակի տեխնոլոգիական փոփոխություններ, որոնք էականորեն չեն կարող փոփոխել շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները:

Սարնաջրերի հեռացում /հեղեղատար կոյուղի/

Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը նախատեսված է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Տարածքի ցածրադիր տեղերում

տեղադրվելու են անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը կհեռացվեն տարածքից և համաձայն տեխնիկական պայմանի կմիացվեն քաղաքային հեղեղատար ցանցին:

Նույն ցանցով և կհեռացվի շենքի տանիքներից հավաքվող անձրևաջրերը և օդափոխության, օդորակման սարքավորումներից առաջացած կոնդենսատները: Ցանցը նախատեսվում է իրականացնել պոլիէթիլենե Մ 200-300մմ խողովակներով:

2.8 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար: Ջրամատակարարումն իրականացվելու է տեխնիկական պայմանների համաձայն՝ գոյություն ունեցող ջրատարից, որը միացված է քաղաքային ջրամատակարարման ցանցին: Իսկ կոյուղին միացված է քաղաքային կոյուղատարին: Հակահրդեհային նպատակներով ջրի պահանջարկը 10լ/վրկ:


Էլեկտրաէներգիայի պահանջարկը շինարարության փուլում կապահովվի ժամանակավոր տրանսֆորմատորային ենթակայանից:

Աղյուսակում ներկայացված են շինարարության ժամանակ անհրաժեշտ ռեսուրսների պահանջարկը՝ հիմնված աշխատանքների ծավալների և կատարման ժամկետների վրա:


Աղյուսակ 2.

NN	Անվանում	Չափման միավոր.	Պահանջարկ
1	Ջուր	Լ/վրկ	0,1
2	Խտացված օդ	Հատ (100լ/ր)	1 կոմպրեսոր
3	Էլեկտրաէներգիա	Փաշվ, ԿՎտ	47.0


2.9 Կառուցապատումների ամփոփ նկարագրերն՝ ըստ ԼՈՏ-երի

Լոտեր NN 1(01), 3

Լոտ 1-ի (ներառյալ նաև 01-ը) մակերեսներ կազմում է 489,67 քմ, որից պայմանական առանձնացված Լոտ 01-ի մակերեսն է 289,67 քմ: Լոտ 1-ի (ներառյալ նաև 01-ը) կառուցապատման մակերեսը կազմում է 350 քմ: Կառուցապատման հարկայնությունը նախատեսված է 8+1 կոնցեպտուալ հարկայնությամբ: Կառուցվող շենքը նախատեսված է ծառայելու է հասարակական և բնակելի նշանակությամբ: Լոտ 3-ի մակերեսներ կազմում է 695,10 քմ, իսկ կառուցապատման մակերեսը կազմում է 608 քմ: Կառուցապատման հարկայնությունը նախատեսված է 8+1 հարկայնությամբ: Կառուցվող շենքը նախատեսված է ամբողջությամբ ծառայելու հասարակական նշանակությամբ՝ որպես հյուրանոց: Վերջինիս կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է 5670 քմ: Հյուրանոցն ունենալու է 45 համար: Կառուցվող շենքի առավելագույն բարձրությունն է 31 մ: Լոտ 1-ի կառուցապատման աշխատանքները նախատեսվում են սկսել 2021թ-ին և ավարտել 2024թ-ի սկզբին: Լոտ 1-ի և Լոտ 3-ի մասով ք. Երևանի հետ համապատասխան պայմանագրերը և ճարտարապետահատակագծային առաջադրանքները ներկայացվում է կից՝ որպես սույն ՆԳՀ-ի 2.9 ենթաբաժնի Հավելված 1.


Լոտեր NN 6, 7, 8:

Լոտեր 6,7,8-ի մակերեսը կազմում է 4294,41 քմ: 3 Լոտերում միասին կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է 2695 քմ: Լոտեր 6,7-ում կառուցապատման հարկայնությունը նախատեսված է 8+1 հարկայնությամբ 1 շենք: Շենքի 1-ին հարկի կառուցապատման մակերեսը կազմում է 1300 քմ, իսկ մյուս 8 հարկերի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է շուրջ 10.000 քմ: Կառուցվող շենքը նախատեսված է ծառայելու է հասարակական և բնակելի նշանակությամբ՝ 145 բնակարաններով: Լոտ 8-ում կառուցապատման հարկայնությունը նախատեսված է 3 հարկայնությամբ: Հուշարձանին հարող մասում կառուցվող շենքերի թիվը 3-ն է, որոնցից 1-ինի կառուցապատման մակերեսը կազմում է 240քմ, 2-րդինը՝ 140 քմ և 3-րդինը՝ 185 քմ: Լոտ 8-ում շենքերի 1-ին հարկի կառուցապատման մակերեսը կազմում է 630 քմ, իսկ մյուս հարկերի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է շուրջ 5.000 քմ: Կառուցվող շենքը նախատեսված է ծառայելու է հասարակական և բնակելի նշանակությամբ՝ 55 բնակարաններով: Լոտեր 6,7,8-ում կառուցապատման առավելագույն բարձրությունը 31 մ է: Լոտեր 6,7,8-ի կառուցապատման աշխատանքները նախատեսվում են սկսել 2021թ-ին և ավարտել 2024թ-ի սկզբին: Լոտեր 6,7,8-ի մասով ք. Երևանի հետ համապատասխան պայմանագրերը և ճարտարապետահատակագծային առաջադրանքները ներկայացվում է կից՝ որպես սույն ՆԳՀ-ի 2.9 ենթաբաժնի Հավելված 2.

Լոտ N 9:


Լոտ 9-ի մակերեսը կազմում է 1780,53 քմ: Լոտ 9-ի կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 527 քմ: Կառուցապատման հարկայնությունը նախատեսված է 8+1 հարկայնությամբ: 1-ին հարկի կառուցապատման մակերեսը կազմում է 630 քմ, իսկ մյուս 8 հարկերի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 5200 քմ: Շենքն ունենալու է 57 բնակարան: Շենքի առավելագույն բարձրությունն է 31 մ: Հուշարձանին հարող մասում նախատեսվում կառուցել 1 հատ 3 հարկանի շենք՝ կառուցապատման 320 քմ մակերեսով: Լոտ 9-ի կառուցապատման աշխատանքները նախատեսվում են սկսել 2021թ-ին և ավարտել 2024թ-ի սկզբին: Լոտ 9-ի մասով ք. Երևանի հետ համապատասխան պայմանագրիքը և ճարտարապետահատակագծային առաջադրանքը ներկայացվում է ստորև՝ որպես սույն ՆԳՀ-ի 2.9 ենթաբաժնի Հավելված 3:

Լոտեր NN 10, 11, 12




Լոտեր 10,11,12-ի գումարային մակերեսը կազմում է 6859,7 քմ: Լոտեր 10,11,12-ում կառուցապատման ընդհանուր մակերեսը նախատեսված է 2101.5 քմ: Լոտեր 10,11-ի կառուցապատման մակերեսը կազմում է 1288 քմ: Այս Լոտերում կառուցվող շենքի հարկայնությունը 8+1 է, որոնցից 1 հարկը կծառայեցվի հասարակական նպատակներով, իսկ 6+1-ը՝ բնակելի: Տիգրան մեծ փողոցին հարող մասում կան հուշարձաններ, որոնք հարկ եղած դեպքում համապատասխան լիազոր մարմնի հետ համագործակցությամբ և նախապես համաձայնեցմամբ վերականգնվելու են և ուժեղացվելու են ռեկոնստրուկցիայի միջոցով՝ առանց փոփոխելու նրանց ծավալատարածական կենցեպտը: Լոտեր 10, 11-ում կառուցվող շենքի 1-ին հարկի մակերեսը կազմում է 1610 քմ, իսկ մյուս 8 հարկերի ընդհանուր մակերեսը կազմում է 12.800 քմ: Այս շենքի բնակարանների թիվը 150 է, առավելագույն բարձրությունը 31 մ: Լոտ 12-ի առանձին մակերեսը կազմում է 2323,22 քմ, իսկ այս Լոտի կառուցապատման մակերեսը կազմում է 813,5 քմ: Այս Լոտում կառուցվող շենքի հարկայնությունը 15+1 է, որոնցից 1 հարկը կծառայեցվի հասարակական նպատակներով, իսկ 15-ը՝ բնակելի: Լոտ 12-ում կառուցվող շենքի 1-ին հարկի մակերեսը կազմում է 1000 քմ, իսկ մյուս 15 հարկերի ընդհանուր մակերեսը կազմում է 15.000 քմ: Այս շենքի բնակարանների թիվը 175 է, առավելագույն բարձրությունը 60 մ: Լոտ 9-ի կառուցապատման աշխատանքները նախատեսվում են սկսել 2021թ-ին և ավարտել 2024թ-ի սկզբին: Լոտ 10,11,12-ի մասով ք. Երևանի հետ համապատասխան պայմանագրերը և ճարտարապետահատակագծային առաջադրանքները ներկայացվում են ստորև՝ որպես սույն ՆԳՀ-ի 2.9 ենթաբաժնի Հավելված 4:


Լոտ N 13



Լոտ 13-ի մակերեսը կազմում է 1077,17 քմ: Լոտ 13-ի կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 800 քմ: Կառուցապատման հարկայնությունը նախատեսված է 8+1 հարկայնությամբ: 1-ին հարկի կառուցապատման մակերեսը կազմում է 820 քմ, իսկ մյուս 8 հարկերի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 5200 քմ: Շենքն ունենալու է 75 բնակարան: Շենքի առավելագույն բարձրությունն է 31 մ: Այս լոտում կառուցվող շենքի առաջին հարկը կծառայեցվի հասարակական նպատակով, իսկ մյուս 8 հարկերը կլինեն բնակելի: Լոտ 13-ի կառուցապատման աշխատանքները նախատեսվում են սկսել 2021թ-ին և ավարտել 2024թ-ի սկզբին: Լոտ 13-ի մասով ք. Երևանի հետ համապատասխան պայմանագրի ընդհանուր և ճարտարապետահատակագծային առաջադրանքը ներկայացվում է ստորև՝ որպես սույն ՆԳՀ-ի 2.9 ենթաբաժնի Հավելված 5.


Լոտ N 14

Լոտ 14-ի մակերեսը կազմում է 2703,11 քմ: Լոտ 14-ի կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 1260 քմ: Նախատեսված է կառուցել 2 շենք՝ հարկայնությունները՝ 8+1 հարկայնությամբ: Շենքերից մեկի 1-ին հարկի կառուցապատման մակերեսը կազմում է 860 քմ, իսկ մյուս 8 հարկերի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 6.880 քմ: Այդ շենքն ունենալու է 80 բնակարան: Շենքի առավելագույն բարձրությունն է 31 մ: Շենքերից 2-րդի 1-ին հարկի կառուցապատման մակերեսը կազմում է 500 քմ, իսկ մյուս 8 հարկերի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 7.500 քմ: Այդ շենքն ունենալու է 75 բնակարան: 2-րդ շենքի առավելագույն բարձրությունն է 60 մ է: Շենքերի 1-ին հարկերը օգտագործվելու են հասարակական նպատակով, իսկ մյուս հարկերը՝ բնակելի: Լոտ 14-ի կառուցապատման աշխատանքները նախատեսվում են սկսել 2021թ-ին և ավարտել 2024թ-ի սկզբին: Լոտ 13-ի մասով ք. Երևանի հետ համապատասխան պայմանագիրը և ճարտարապետահատակագծային առաջադրանքը ներկայացվում է ստորև՝ որպես սույն ՆԳՀ-ի 2.9 ենթաբաժնի Հավելված 6.


Լոտ N 15

Լոտ 15-ի մակերեսը կազմում է 1980,07 քմ: Լոտ 15-ի կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 1212,5 քմ: Կառուցապատման հարկայնությունը նախատեսված է 14+2 հարկայնությամբ: 1-ին 2 հարկերի կառուցապատման մակերեսը կազմում է 2.420 քմ, իսկ մյուս 14 հարկերի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 9.520 քմ: Շենքն ունենալու է 104 բնակարան: Շենքի առավելագույն բարձրությունն է 60 մ: Այս լոտում կառուցվող շենքի առաջին 2 հարկերը կծառայեցվեն հասարակական նպատակով, իսկ մյուս 14 հարկերը կլինեն բնակելի: Լոտ 15-ի կառուցապատման աշխատանքները նախատեսվում են սկսել 2021թ-ին և ավարտել 2024թ-ի սկզբին: Լոտ 15-ի մասով ք. Երևանի հետ համապատասխան պայմանագիրը և ճարտարապետահատակագծային առաջադրանքը ներկայացվում է ստորև՝ որպես սույն ՆԳՀ-ի 2.9 ենթաբաժնի Հավելված 7.

Լոտ N 16




Լոտ 16-ի մակերեսը կազմում է 4994,10 քմ: Լոտ 16-ի կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 2166,56 քմ: Կառուցապատման հարկայնությունը նախատեսված է 8+2+2 հարկայնությամբ: 1-ին 2 հարկերի կառուցապատման մակերեսը կազմում է 4.800 քմ, իսկ մյուս 10 հարկերի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 21.900 քմ: Շենքն ունենալու է 160 բնակարան: Շենքի առավելագույն բարձրությունն է 45,5 մ: Այս լոտում կառուցվող շենքի առաջին 2 հարկերը կծառայեցվեն հասարակական նպատակով, իսկ մյուս 10 հարկերը կլինեն բնակելի: Լոտ 16-ի կառուցապատման աշխատանքները նախատեսվում են սկսել 2021թ-ին և ավարտել 2024թ-ի սկզբին: Լոտ 16-ի մասով ք. Երևանի հետ համապատասխան պայմանագիրը և ճարտարապետահատակագծային առաջադրանքը ներկայացվում է ստորև՝ որպես սույն ՆԳՀ-ի 2.9 ենթաբաժնի Հավելված 8.

Լոտ N 17


Լոտ 17-ի մակերեսը կազմում է 5153,03 քմ: Լոտ 17-ի կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 2446,5 քմ: Կառուցապատման հարկայնությունը նախատեսված է 8+2+2 հարկայնությամբ: 1-ին 2 հարկերի կառուցապատման մակերեսը կազմում է 5.200 քմ, իսկ մյուս 10 հարկերի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 19.820 քմ: Շենքն ունենալու է 112 բնակարան: Շենքի առավելագույն բարձրությունն է 45,5 մ: Այս լոտում կառուցվող շենքի առաջին 2 հարկերը կծառայեցվեն հասարակական նպատակով, իսկ մյուս 10 հարկերը կլինեն բնակելի: Լոտ 17-ի կառուցապատման աշխատանքները նախատեսվում են սկսել 2021թ-ին և ավարտել 2024թ-ի սկզբին: Լոտ 16-ի մասով ք. Երևանի հետ համապատասխան պայմանագիրը և ճարտարապետահատակագծային առաջադրանքը ներկայացվում է ստորև՝ որպես սույն ՆԳՀ-ի 2.9 ենթաբաժնի Հավելված 9.

Լոտ N 18



Լոտ 18-ի մակերեսը կազմում է 4974,81 քմ: Լոտ 18-ի կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 2364,5 քմ: Նախատեսված է կառուցել 2 ֆունկցիոնալ շինություններ՝ որոնցից 1-ը նախատեսված է հյուրանոց՝ 10+1 հարկայնությամբ, 2000 քմ կառուցապատման մակերեսով, իսկ մյուսը իրենից կներկայացնի հյուրանոցին կից գրասենյակային շենք՝ 13 հարկանի, 800 քմ կառուցապատման մակերեսով: Հյուրանոցային շենքի առավելագույն բարձրությունն է 60 մ: Հյուրանոցային համարների քանակը՝ 160: Գրասենյակային շենքի առավելագույն բարձրությունն է 40մ, կառուցապատման ընդհանուր մակերեսը՝ 13,600 քմ: Լոտ 18-ի կառուցապատման աշխատանքները նախատեսվում են սկսել 2021թ-ին և ավարտել 2024թ-ի սկզբին: Լոտ 18-ի մասով ք. Երևանի հետ համապատասխան պայմանագիրը և ճարտարապետահատակագծային առաջադրանքը ներկայացվում է ստորև՝ որպես սույն ՆԳՀ-ի 2.9 ենթաբաժնի Հավելված 10.

Լոտ N 19



Լոտ 19-ի մակերեսը կազմում է 1634,11 քմ, կառուցապատումը նախատեսվում է իրականացնել ընդհանուր 33 թաղամասի կոնցեպտի մեջ և ընթացքի մեջ են հայեցակարգային նախագծման աշխատանքները: Լոտ 19-ի կառուցապատման աշխատանքները նախատեսվում են սկսել 2021թ-ին և ավարտել 2024թ-ի սկզբին: Լոտ 19-ի մասով ք. Երևանի հետ համապատասխան պայմանագիրը և ճարտարապետահատակագծային առաջադրանքը ներկայացվում է ստորև՝ որպես սույն ՆԳՀ-ի 2.9 ենթաբաժնի Հավելված 11.

Հարկ է նշել, որ նախատեսվող գործունեությունը թեև իրենից ներկայացնում է կառուցապատում և համաձայն <<ՇՄԱԳ և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի դասակարգվում է Գ կատեգորիայի գործունեությունների շարքին՝ որպես մեկ նախատեսվող գործունեություն, մեկ փորձաքննական պետական տուրքի 15.000 ՀՀ դրամ վճարով, այնուամենայնիվ, Ձեռնարկողը բարի կամքի դրսևորմամբ կատարել է 240.000 ՀՀ դրամի պետական տուրքի վճարում (15.000-ական դրամներ՝ բոլոր լոտերից յուրաքանչյուրի համար, որպես փորձաքննական պետական տուրք), որպեսզի օրենսդրական ոչ հստակ կարգավորումների հետևանքով պետական բյուջե նախատեսվող տուրքերը մոծվեն հնարավոր առավելագույն չափով: Պետական տուրքի վճարման անդորրագիրը կցված է սույն ՆԳՀ-ին՝ որպես 2.9 ենթաբաժնի Հավելված 12:

Այն լոտերը, որոնցում առկա են պատմամշակութային հուշարձաններ կամ տարածքներով հարում են հուշարձաններին, նախատեսվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահպանության ընթացակարգերի կիրառում: Մասնավորապես ընթացիկ, հայեցակարգային նախագծման փուլում նախատեսված է, որ ոչ մի հուշարձան չի վնասվելու կամ քանդվելու: Վերջնական համաձայնեցումներից հետո դիտարկվելու է անգամ այնպիսի տարբերակ, որով նախատեսվում է ք. Երևանի կոնսերվացված հուշարձանային շենքերի քարերը և ճարտարապետական լուծումները օգտագործել 33 թաղամասի ընդհանուր կոնցեպտում՝ ստեղծելու համար յուրատեսակ ճարտարապետական միջավայր: Այլ թաղամասերի քանդված շենքերի մնացորդները բոլոր պահանջվող համաձայնեցումներից հետո կարող են տեղափոխվել և կվերկանգնվել այս հատվածում՝ օգտագործելով դրանք 33 թաղամասի կառուցապատման արտաքին ֆասադներում կամ այլ հնարավոր հատվածներում:

Նախատեսվող ճանապարհային հատվածները 33-րդ թաղամասում զբաղեցնելու են 11200 քմ, ստորգետնյա եռահարկ ավտոկայանատեղիով, որտեղ մուտքերը կազմակերպված են կից կառուցվող շենքերի ստորգետնյա հատվածից: Ճանապարհային հատվածների -1 հարկաբաժիններում տեղակայվելու են ինժեներական ենթակառույցները՝ տրանսֆորմատորներ, հակահրդեհային, մագիստրալ-կոմինակոցիոն ինժեներական գծերը և այլն: Ավտոկայանատեղիներ կան նաև բոլոր շենքերի ստորգետնյա հարկերում:

Մայթերի լայնությունները նախատեսված են 3-3,5 մ, իսկ մայթերը ճանապարհներից առանձնանում են կանաչապատ հատվածով լայնությունը՝ 2,5-3 մ: Ճանապարհների արտաքին պարագծով բացի մայթերից նախատեսվում են նաև հեծանվային ուղիներ՝ 1,6 մ լայնությամբ:

16, 17, և 18 լոտերի կենտրոնական հատվածում նախատեսված է շրջանաձև բակ՝ ընդհանուր օգտագործման նպատակով՝ 80 մ տրամագծով:


Կանաչ գոտիների և գազոնների ընդհանուր մակերեսը կազմելու է 11,600 քմ: Կանաչապատման սխեման, կառուցվածքը և մանրամասը կազմի նկարագիրը ներկայացված է դենդրոնախագծում:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

3.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

<<Երևան քաղաքի 33-րդ թաղամասի կառուցապատում>> աշխատանքային նախագծի իրականացման տարածքը գտնվում է Կենտրոն վարչական շրջանում, Հանրապետության փողոցին հարող տարածքում, խառը կառուցապատման գոտում: Կառուցապատվող տարածք մակերեսը կազմում է 57 694 19քմ: Մակերևույթի բացարձակ նիշերը տատանվում են 983,11-985,13 մետրի սահմաններում: Կառուցապատման տարածքն ընկած է՝ Խանջյան, Հանրապետության, Բուզանդի փողոցների և Տիգրան Մեծ պողոտայի միջանկյալ հատվածում: Հողամասում առկա են ամբողջությամբ քանդման ենթակա, անկանոն կառուցապատված, ցածրահարկ շինություններ:

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում: Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տեղամասն ունի հարթ ռելիեֆային բնույթ: Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆրակցիաներով:



3.2 Ռելիեֆը

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Քանա-քեո-Արաբկիրի հրաբխային սարավանդի սահմաններում, նրա հարավ-արևմտյան մասում, Կոնդի բլրաշարի վերջնամասում, Արարատյան լճա-կուտակումային հարթավայրին անցման գոտում, Հրազդան գետի ձախափնյա ջրբաժանի հարավ-արևելյան լանջերի վրա, իր արևելյան և հարավ-արևելյան մասերով ընդգրկում է Արարատյան լճա-կուտակումային հարթավայրի տափարակային մասը, մակերեսը հիմնականում հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ-արևելք, հարավ, այն հյուսիս-արևմուտքից և հյուսիսից կողմերով պարուրված է Կոնդի բլրաշարի ջրբաժանով: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1149.0-1150.0 մետրի սահմաններում:

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում: Ռելիեֆի հիմնական տարրերն են Կոտայքի և Ջրվեժ-Ջրվեժի հրաբխային սարավանդների լանջերը, ինչպես նաև Գետառ գետի կիրճի զառիթափ լամջերը:

3.3 Կլիման

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով: Գործունեության ենթակա տարածքը գտնվում է <<տաք>> կլիմայական գոտում: <<Տաք>> գոտու կլիմայական բնութագրերն են՝ ամառ՝ շոգ, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին՝ 21 °C, հարաբերական խոնավությունը (ծ 15-ին)՝ 35% ցածր, բարենպաստ լեռնահովտային քամիներ՝ միջին արագությունը 2,0-3,0 մ/վ : Ձմեռ՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին 0 °C-ց մինչև մինուս 5 °C, հարաբերական խոնավությունը (ծամը 15-ին) 60-70%, քամու միջին արագությունը՝ 2,0-3,0 մ/վ:

Առանց սառնամանիքների ժամանակաշրջանը կազմում է 213 օր, առանձին տարիներին տատանվելով 163-ից մինչև 234 օր: Օդի միջին ջերմաստիճանն ըստ բարձրության տատանվում է 11.5–120C: Բացառձակ նվազագույն ջերմաստիճանը դիտվել է հունվարին՝ մինուս 30 0C, բացառձակ առավելագույնը՝ հուլիս-օգոստոս ամիսներին՝ + 42 0C:

Տարածքի կլիման աչքի է ընկնում չորայնությամբ: Գարնան ամիսներին (մարտ – մայիս) դիտվում են մինչև 150 մմ տեղումներ, հունիս – սեպտեմբեր ամիսները խիստ չորային են՝ մինչև 64 մմ: Տեղումների տարեկան քանակը տատանվում է 286 մինչև 353 մմ:

Ամռանը օդի հարաբերական խոնավությունը կազմում է 49% – 53%, ձմռանը՝ 73% - 76%, գարնանը՝ 57% – 61% և աշնանը՝ 51% – 70%:

Դիտարկվող տարածքին ամենամոտը տեղակայված է Էրեբունի օդերևութաբանական կայանը, որի տվյալներով քամու փչելու ուղղությունը տատանվում է և գերակա ուղղություն չկա: Հյուսիս- արևելյան և հարավ-արևելյան քամիները ավելի շատ են ապրիլին, հարավ-արևմտյան քամիները՝ հունիսին, հյուսիս-արևելյան քամիները՝ հուլիսին և հյուսիս արևելյանը՝ հուլիսին, հարավ արևելյան քամիները՝ հոկտեմբերին:

Դիտարկվող տարածքի համար բնորոշ քամու ուղղությունը հյուսիս-արևելյան է: Գերակշռում են 2.1մ/վրկ արագության հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան ուղղության քամիները, 20 տարվա ընթացքում մեկ անգամ հնարավոր են 23մ/վրկ ուժգնության քամիներ: Ձմռան ամիսներին հաճախակի դիտվում են հանդարտ և թույլ քամիներով եղանակներ, ինչը ռելիեֆի գոգավորության պայմաններում նպաստում է սառը օդի լճացմանը: Հունվար ամսին հանդարտ օրերի թիվը կարող է կազմել 45% – 75%:

Ձյան ծածկոցի հաստությունը հասնում է 50սմ, ճնշումը՝ 70կգու/մ²: Հողի սառչելու առավելագույն խորությունը կազմում է 70սմ:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբ. կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
Էրեբունի	888	-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9

Աղյուսակ 2.2 Օդի հարաբերական խոնավությունը Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբ. կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
Էրեբունի	888	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան
	Ըստ ամիսների												
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	

Էրեբունի	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291
	24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51

3.4. Տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները

Կենտրոն վարչական շրջանի թիվ 33 թաղամասում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման տարածքը գտնվում է Երևան քաղաքի կենտրոնական մասում՝ Խանջյան, Հանրապետության, Բուզանդի փողոցների և Տիգրան Մեծ պողոտայի միջանկյալ հատվածում: 5.75 հա /կամ 57.500 քմ/ տարածքի վրա, կառուցվելու է է բնակելի և հասարակական շենքերով թաղամաս, ինչպես նաև ներթափային ճանապարհային ցանց: Հողամասում առկա են ձեռք բերման և ամբողջությամբ քանդման ենթակա կառուցապատված շենք շինություններ:

Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային չստորաբաժանված համախմբերի առաջացումները. ներկայացված բազալտներով, անդեզիտա-բազալտներով, դոլերիտներով, Հրազդանի գետի բարձր վերողողահունային դարավանդի առաջացումները՝ ավազ, կավավազ, ճալաքարա-կոպճային, ճալաքարա-գլաքարային գրունտներ, ինչպես նաև ժամանակակից, ալյուվիա-պրոլյուվիալ, դելյուվիա-պրոլյուվիալ և էլյուվիա-դելյուվիալ առաջացումները՝ ավազներ, կավային և խոշորա-բեկորային գրունտներ:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Լիթոլոգիական տեսակետից տարածքում կարելի է առանձնացնել հետևյալ երկրաբանական տարբերակները՝

1. Ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ գրունտներ, ներկայացված գորշ կավավազով ամուր կազմության, փթաց բույսերի մնացորդներով և արմատներով:

2. Մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

3. Մեծաբեկորային գրունտ, խճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արանքները լցված են մինչև 10% կավավազային և ավազային լցանյութով: Քարակտորները ներկայացված են հրաբխային ապարներով:

4. Վերին չորրորդական լճա-ալյուվիալ նստվածքներ ներկայացված Խճա-մանրախճային գրունտներով մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Համաձայն կատարված աշխատանքների տվյալների տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների հետևյալ տարատեսակները՝

- ասֆալտաբիտումային ծածկոց

- լիցքային գրունտ
- խոշորա-բեկորային գրունտներ
- ժայռային և կիսաժայռային գրունտներ

Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից շրջանի և հետագույն տեղամասի ստորգետնյա ջրերը կապված են հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ, որոնք պատկանում են լավատակի, միջլավային տարատեսակներին, ինչպես նաև բերվածքային ալյուվիա-պրոյուվիալ առաջացումների հետ, որոնք հանդիսանում են հունատակի, վերադրոհառնային տարատեսակներին պատկանող ջրեր: Ներկայացված են նաև՝ Հրազդան գետի բարձր դարավանդի և Գետառ գետի պալեոհունի ալյուվիա-պրոյուվիալ առաջացումների հետ կապված՝ ծակոտկենա-դատարկություններով գրունտային ջրեր:

Տեղամասում հորատված հորատանքերով գրունտային ջրերը բացահայտվել են 12.0 մետր խորության վրա:

3.5 Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ուսումնասիրվող տեղամասում գրունտների հորիզոնական առավելագույն արագացումների և գերակայող պարբերությունների գնահատման համար հիմք է ընդունվել ՀՀՇՆ II-6.02-2006 <<Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր>> նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտևորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:

Սեյսմա-տեկտոնական տեսակետից շրջանը և տեղամասը տեղադրված է Երևանի վերադրված միջլեռնային ճկվածքի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Շրջանը համարվում է հայկական բարձրավանդակի ամենասեյսմակտիվ գոտիներից մեկը:

3.6. Մթնոլորտային օդ

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ-ի կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 16 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից,

որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 211 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ:

ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայան-ներում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, փոշու և գետնամերձ օդոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշման:

Ըստ Էկոմոնիթորինգի 2019 թվականի տեղեկագրի Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաները չնայած գտնվում են սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի (ՄԹԿ) տիրույթում, բայց ամսվա ընթացքում և քաղաքի տարբեր հատվածներում դիտվում են գերազանցումներ, ինչը պայմանավորված է ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման այլ աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

Երևան քաղաքի մթնոլորտային օդում ածխածնի մոնօքսիդի համեմատաբար բարձր կոնցենտրացիաներ դիտվում են առավոտյան՝ 8:00-11:00 ժամանակահատվածներում և երեկոյան՝ 18:00-23:00 ժամանակահատվածներում:



Շինհրապարակի տեղադիրքը Google Earth ծրագրի լուսանկարում

3.7. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է “Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ-ի կողմից: Երևանի տարածքում հիմնական ջրային ռեսուր է հանդիսանում Հրազդան գետը: Հրազդան գետի Արզնի ՀԵԿ-ից ներքև հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և հանքայնացումով: Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ և գետաբերանի հատվածներում Հրազդան գետի ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս):

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով:

Մակայն, քանի որ ներկայացվող տարածքի հեռավորությունը Հրազդան գետի մոտակա հատվածից կազմում է մոտ 3.4 կմ ուղիղ գծով, շինարարական աշխատանքները չեն կարող ազդել Հրազդան գետի ջրի որակի վրա:

3.8. Հողային ռեսուրսներ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով լանդշաֆտային գոտում: Երևանի հողերը տիպիկ գորշ, կիսաանապատային են՝ սննդանյութերով աղքատ, հարուստ կարբոնատներով: Այս տիպի հողերը սակավագոր են, ունեն կավավազային կազմ, աչքի են ընկնում կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ և քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով:

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Ներկայացվող տարածքում հողային ծածկույթն արդեն իսկ խախտված է, շինարարական աշխատանքներից: Կառուցապատվող տարածքում տարածված են կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային հողերը, որտեղ բուսածածկը և հողածածկը գրեթե չեն հանդիպում, կամ հանդիպում են տեղ-տեղ՝ 5-10սմ հզորությամբ, որի համար ՀՀ օրենսդրությամբ չեն սահմանվում պահման նորմեր:

Հողային աշխատանքների ժամանակ, գրունտի մշակման աշխատանքներից առաջացող հողային հանույթները կուտակվելու են կազմակերպված շինարարական հրապարակի տարածքում, հետագայում օգտագործվելու հետլիցքի, կամ տարածքների հարթեցման համար: Իսկ նմացորդային գրունտը հեռացվելու է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

Համաձայն Երևանի գլխավոր հատակագծի քաղաքի տարածքը աղտոտված է ծանր մետաղներով և մասամբ՝ ռադիոնուկլիդներով: Ըստ ծանր մետաղներով աղտոտվածության քաղաքի տարածքը ներկայումս վերագրվում է միջին աղտոտվածության տարածքներին: Մակայն քաղաքի տարածքում առանձնանում են նաև ուժեղ աղտոտված տարածքներ: Պետք է նշել, որ դիտարկվող տարածքը աղտոտված չէ:

Ներկայացվող տարածքն ամբողջությամբ կառուցապատված է և այստեղ բաց հողային մակերեսներ չկան:

Ներկայացվող տարածքում հողային ծածկույթն արդեն իսկ խախտված, կառուցապատված տարածք է: Կառուցապատվող տարածքում տարածված են կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային լիցքային գրունտները:

ձևով հողերը, որտեղ բուսածածկը և հողածածկը գրեթե բացակայում են և հնարավոր չէ բուսաշերտը հանել և պահեստավորել շինարարության ընթացքում:

Հողային աշխատանքների ժամանակ, գրունտի մշակման աշխատանքներից առաջացող լիցքային գրունտը կուտակվելու են կազմակերպված շինարարական հրապարակի տարածքում, հետագայում մի մասը օգտագործվելու հետլիցքի համար, իսկ մնացորդային քանակը շինհրապարակից հեռացվում է աղբավայր:

Կառուցապատվող տարածքը դրադենում է 5.75 հա մակերես և սեփականության իրավունքով պատկանում է <<Սիթի Սենթր Դիվելոպմենթ>> ՓԲԸ-ին և այլ ընկերությունների: /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը ներկայացվում է սույն հայտին կից փաստաթղթերում/:

3.9. Կենսաբազմազանություն

Տարածքը գտնվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի խառը կառուցապատման գոտում: Քանի որ տարածքը կառուցապատված է բնակելի, հասարակական, վարչական շենք-շինություններով, սեփական տներով, ավտոտնակներով և այլ շինություններով, ուստի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի շրջանակներում չի դիտարկվում նշված տարածքի կենսաբազմազանությունը, սակայն ստորև բերված է Երևան քաղաքի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տեղեկատվությունը:

3.9.1 Բուսական աշխարհ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանյան գոգավորությունը տեղաբաշխված ծովի մակերևույթից 860-1390մ բարձրությունների սահմաններում: Երևանյան գոգավորությունում առկա են հարթավայրային լանդշաֆտային և լավային սարավանդներ, որոնք բաղկացած են կիսաանապատային և նախալեռնային գոտիներից: Երևանի դիտարկվող տարածքում, որտեղ իրականացվելու է նախատեսվող գործունեությունը գերիշխում են լավային սարավանդները, իսկ հարավային լանդշաֆտները՝ Հրազդան և Գետառ գետերի սելավաբերուկ հողատարածքներն են: Երևան քաղաքը գտնվելով ջրագուրկ կիսաանապատային գոտում ընդերքում ունի հարուստ ջրատար շերտեր՝ խորքային ջրեր:

Երևան քաղաքի տերիտորիան Անդրկովկասի ամենաչորային շրջաններից մեկն է, կլիման այստեղ խիստ ցամաքային է, կիսաանապատային: Երևանում ցածր է նաև օդի հարաբերական խոնավությունը, որը ամռան ամիսներին իջնում է մինչև 40%-ի: Երևանում հաճախակի նկատվում է կարճ գարուն, որը բացասական ազդեցություն է ունենում ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչների վրա:

Երևանի հողերը տիպիկ գորշ կիսաանապատային են, աղքատ աննդանյութերով, հարուստ կարբոնատներով, սակավագոր, կավավազային, կմախքային զանգվածների մեծ

պարունակությամբ, շերտաթեփուկավոր կամ փոշեհատիկային կազմությամբ, քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով: Հազարամյակների ընթացքում արհեստական ոռոգման տարբեր տեսակի ագրոմիջոցառումների պարագայում Երևանի տարածաշրջանում առաջացել են կուլտուր-ոռոգելի զգալի հողատարածքներ, որոնք վերածվել են տարբեր տիպի փարթամ կուլտուրական լանդշաֆտների:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսակների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝ 1. Ֆրիգանա (ժայռային բուսականություն), 2. Տոմիլյար (անապատային): Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Պետք է նշել, որ գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ խախտված, կառուցապատված են՝ զուրկ բուսական, կամ հողային ծածկույթից: Նախատեսված աշխատանքներն իրականացվում են հասարակական կառուցապատման տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

3.9.2. Կենդանական աշխարհ

Շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Համայնքի տարածքում տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրաույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են: Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դոդոշը, մոդեստներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարաոտ սցինկը, օձերից՝ կույր օձուկը, ոնգեղջյուր օձը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սասիթրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր,

փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակներ և տգեր: Հրագրան գետում հանդիպում են ձկների 7 տեսակ:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

Ուսումնասիրվող տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող տարածքների, կամ կենսաբազմազանության տեսակների հետ:

3.10 Սոցիալ տնտեսական պայմանները

Ներկայացվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում:

Ստորև բերված են Երևան քաղաքի որոշ սոցիալ-տնտեսական ցուցանիշներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքից¹:

Աղյուսակ 2.5. Երևանի ընդհանուր ցուցանիշները

N	Տարածքը	223 քառ. կմ
1	ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը	0.7 %
2	Գյուղատնտեսական նշանակության հողեր	3 351.2 հա
3	այդ թվում՝ վարելահողեր	915.6 հա
4	Վարչական շրջաններ	12
5	Բնակչության թվաքանակը 2015թ. տարեվերջի դրությամբ	1 073.7 հազ. մարդ
6	ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2015թ.	35.8 %

Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

¹ www.armstat.am

Մայրաքաղաքում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

2017թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

Աղյուսակ 2.6 Երևանի տնտեսության համամասնական տվյալները

✓ արդյունաբերություն`	41.2%,
✓ գյուղատնտեսություն`	1.1%,
✓ շինարարություն`	63.7%,
✓ մանրածախ առևտուր`	76.4%
✓ ծառայություններ`	81.4%:

Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են ամբողջ հանրապետության կապն արտաքին աշխարհի հետ):

Երևանի փողոցներում վերջին տարիներին կանաչապատման համար, մասնավորապես ծառատունկի, չափանիշներ են կիրառվում: Նախատեսված է տնկել առնվազն 4 սմ տրամագծով, 2-3 տարեկան տնկիներ և բացառապես այն հատվածներում, որտեղ կա ռոռզման համակարգ: Կանաչապատմանը զուգահեռ` կստեղծվեն ռոռզման նոր համակարգեր. այս տարի նախատեսվում է շուրջ 5 կմ ռոռզման նոր ցանց կառուցել: 5 տարում Երևանում կտնկվի 500 հազար ծառ, ոչ միայն փողոցներում, այլև անտառ-պուրակներում: Մասնավորապես, այդպիսի նոր տարածք կստեղծվի Նուբարաշենի աղբավայրին հարող հատվածում. ավելի քան 20 հեկտարում կտնկվեն բարձրարժեք բազմամյա թփեր և ծառեր: Հեռանկարում նախատեսվում է անտառ-պուրակի սահմաններն ընդլայնել և ներառել ներկայիս աղբավայրը` վերջինիս ծածկումից հետո: Քաղաքի կանաչ կերպարը կփոխվի այն իմաստով, որ կտնկվեն նոր` ծաղկող ծառեր և թփեր, կլինեն նաև մի քանի նոր ծաղկատեսակներ:

Նախատեսվում է զարգացնել ուղղաձիգ կանաչապատումը՝ պատերի, վերգետնյա անցումների, պատշգամբների ու այլ հատվածների վրա: Քաղաքի հորեյանի առիթով Երևանին նվիրված 2800 արծաթափայլ եղնիկները կպահվեն հատուկ տարածքում այնքան ժամանակ, մինչև մասնագետները որոշեն, որ դրանք կարող են ապրել «ինքնուրույն» ու կտնկվեն արդեն իրենց տեղերում: Ըստ այդմ, կզարգացվեն տնկարանային և ջերմոցային տնտեսությունները: Այժմ համայնքն ունի 20 հեկտար տնկարաններ, այդ թվում՝ 6000 քմ ջերմոցային տնտեսություն: Նոր մոտեցմամբ կիրականացվի նաև ծառերի էտը, ընդ որում, էտված ճյուղերն ու փայտանյութը կմանրացվի և կօգտագործվի կանաչապատման ոլորտում:

Աղյուսակ 2.7. Սոցիալական ցուցանիշներ

<i>Սոցիալական ցուցանիշը</i>	<i>Ընդամենը</i>	<i>Կանայք</i>	<i>Տղամարդիկ</i>
Զբաղվածներ, հազ. մարդ	294.3	144.3	160.0
Ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, հազ.մարդ	168.9	104.4	64.5
Աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	17076	-	-

Կենտրոն վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ, Արաբկիր, Էրեբունի, Մալաթիա-Սեֆաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների հետ:

Աղյուսակ 2.8. Ազդակիր վարչական շրջանը

<i>Վարչական շրջան</i>	<i>Տարածքը, հա</i>	<i>Բնակչության թվաքանակը 2016 թ. տարեվերջին, հազ.մարդ</i>
Կենտրոն	1335	126 600

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

4.1 Ռիսկերի գնահատում

Թիվ 33 թաղամասում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները և հնարավոր ռիսկերը գնահատվում են շենք-շինությունների քանդման, ապամոնտաժման, կառուցման, աշխատանքների ընթացքում, մասնավորապես՝ գնահատվում են անօրգանական փոշու և այլ ծխագազերի արտանետումներ և աղմուկի մակարդակի աճ շինգործողությունների ընթացքում: Սակայն նշված ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված՝ հիմնականում ընդգրկելով ներկայացվող գործունեության տարածքը, ինչպես նաև հաշվի առնելով նախատեսվող շինարարական աշխատանքների ծավալը՝ ըստ աստիճանի և ինտենսիվության շրջակա միջավայրի վրա բոլոր բացասական ազդեցությունները և ռիսկերը կլինեն մինիմալ և կառավարելի:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ՝

- Քանդման ընթացքում /գոյություն ունեցող բնակելի տներ, հասարակական նշանակության շենք շինություններ, ավտոտնակներ այլն/,
- Նոր կառուցվող շենքերի շինարարության ընթացքում
- Հիմքերի փորման ընթացքում
- Դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:
- Հողային զանգվածների և շինադրի տեղափոխման հետ կապված,
- Շինարարական տեխնիկայի շահագործմամբ,
- Բետոնային աշխատանքների իրականացմամբ,
- շինհրապարակների տեղադրման և վառելիքաքսայուղերի պահեստավորման հետ կապված,
- Շինարարության ընթացքում մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից մերձակա հանրային տարածքներին պատճառվող անհանգստությամբ
- Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

4.2 Օղի աղտոտում

4.2.1 Օղային ավազանի աղտոտվածություն և մեղմացման միջոցառումները

Կենտրոն վարչական շրջանի թիվ 33 թաղամասում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցապատման աշխատանքների ընթացքում հիմնականում կանխատեսվում է օղի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխազագերի արտանետումներով, որոնք առաջանում են առկա շինությունների ապամոնտաժման և քանդման, ինչպես նաև նոր բազմաֆունկցիոնալ համալիրի շենքերի կառուցման հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի աշխատանքի դեպքում:

Գործունեության ընթացքում հիմնական անօրգանական փոշու արտանետումներ առաջացնող աշխատանքները ներառում են՝ ապամոնտաժման և քանդման աշխատանքներ, հողային հանույթի բեռնման և թափոնակույտման աշխատանքներ:

Շինարարական մեքենա-սարքավորումների շահագործման ընթացքում առաջանում են նաև դիզելային վառելիքի այրմամբ պայմանավորված այլ վնասակար ծխազագերի արտանետումներ, սակայն նշված արտանետումները շին-հրապարակի սահմաններում բնապահպանական միջոցառումների իրականացմամբ կպահվեն ՀՀ գործող ՍԹԿ-ների սահմաններում: Թույլատրելի նորմերի սահմաններում ներկայացված վնասակար նյութերի արտանետումների կառավարումը և դրանց հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն և/կամ կնվազեցվեն շինարարական հրապարակում պարբերաբար իրականացնելով շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների ծրագիրը մասնավորապես՝ փոշենստեցման նպատակով նախատեսվում է ջրցանի գործողություններ: Բացի այդ փոշի առաջացնող նյութերը (ավազ, խիճ և այլն) շինարարական հրապարակում կպահվեն ժամանակավոր՝ պաստառներով ծածկված վիճակում, ինչպես նաև վերջիններիս տեղափոխումը նույնպես կիրականացվի բեռնատարերի ծածկված թափքերի պայմաններում: Փոշու նվազեցման նպատակով կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակը, որը ևս արտանետումների կրճատման միջոցառում է:

Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում կիրականացվի նաև օղի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

Մթնոլորտային օղի պահապանությանն ուղղված բնապահպանական միջոցառումների համալիր ցանկը բերվում է *ԲԿՊ-ում*:

4.3 Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը՝ հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների (բնակելի և հասարակական շենքեր, հյուրանոցային համալիր) հեռավորությունը շինտարածքից (մոտ 20-50մ): Հարակից տարածքների հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ, իսկ շինարարության ընթացքում որպես կարևորագույն միջոցառումներ, անհրաժեշտ է՝

- Խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները և հասարակական շինությունները, փոքր բիզնեսի կետերը և այլն:
- Աղմկահարույց աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:
- Բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:

4.4 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Անհրաժեշտ ջրաքանակը շին հրապարակ կմատակարարվի տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցից: Փոշենստեցման համար պահանջվող ջուրը շինհրապարակ կբերվի ջրատար մեքենաներով:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրը օգտագործվելու է աշխատողների խմելու և կենցաղային նպատակների, ինչպես նաև փոշենստեցման համար:

Գոյություն ունեցող շենք շինությունների ապամոնտաժման և մասնաշենքերի կառուցման աշխատանքների ընթացքում առաջացած հնարավոր փոշու մակարդակները կնվազեցվեն ջրցանի իրականացմամբ:

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսի հաշվարկը բերվում է ստորև.

$$V = S \times K \times T$$

որտեղ՝

S – ջրցանվող շինարարական տարածքի մակերեսն է՝ 43416 ք. մ

K – 1 մ2 օրական ջրցանի նորմատիվն է՝ 0.0015 մ3,

T – ամբողջ շինարարության ժամանակահատվածն է (օրերով)՝ 22 օր x 48 ամիս=1320

$$V = 43416 \times 0.0015 \times 1056 = 68770 \text{ մ}^3/\text{շինարարություն ժամանակ}$$

Շին աշխատանքների ընթացքում ջրցանի համար անհրաժեշտ ջրի քանակը կկազմի 68770 մ³:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) T$$

Որտեղ՝ n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է - 25

N - ջրածախսի նորման՝ - 0.016մ³,

N_1 - բանվորների թիվն է - 114,

N_1 - ջրածախսի նորման բանվորների համար՝ - 0.025մ³/մարդ օր<

T –աշխատանքային օրերի առավելագույն թիվը՝ 1056 օր:

Այսպիսով՝ $W = (25 \times 0.016 + 114 \times 0.025) \times 1056 = 3315.84 \text{ մ}^3/\text{շին.ժամ}$, միջին օրեկան 4.8մ³:

Ջրահեռացում

Ջրցանը դասվում է անվերադարձ ջրօգտագործման շարքին և արտահոսք չի առաջանում:

Շինարարությունը իրականացնող անձնակազմը օգտվելու է ժամանակավոր տնակներից:

Կենցաղային կեղտաջրերի հեռացմանն համար շինհրապարակի տարբեր հատվածներում կտեղադրվեն բիոգուգարաններ:

Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը նախատեսված է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Տարածքի ցածրադիր տեղերում տեղադրվելու են անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը կհեռացվեն տարածքից և համաձայն տեխնիկական պայմանի կմիացվեն քաղաքային հեղեղատար ցանցին:

Ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու են քաղաքային ցանցերին միանալուց հետո: Այդ միացումները կատարվելու են առաջնահերթ: Շինարարություն իրականացնող անձնակազմը օգտվում է ժամանակավոր տնակներից:

4.5 Բնապահպանական միջոցառումներ

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա բնակչության վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությանների կանխման, կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

4.5.1. Մթնոլորտային օդ

- Օդային ազդանք աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝
- Շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,
 - Ստորին նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելելու համար փոշու տարածումը,
 - Պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում:
 - Գրունտի և ստորին նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով:
 - Խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:
 - Անհրաժեշտ է իրականացնել շին հրապարակի պարբերական ջրցանում և օգտագործել պաշտպանիչ ցանցեր՝ փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով:

4.5.2. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- Ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- Շինարարական աշխատանքների համար օգտագործել տեխնիկական որակի ջուր՝ տարածքում առկա ռոզման ջրացանցից,
- Տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին:
- Շինարարական և տրանսպորտային միջոցները պետք է լվացվեն և սպասարկվեն շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լվացման կետերում և տեխնիկական սպասարկման կայաններում
- Պահել բոլոր հեղուկ նյութերը և քսանյութերը (օր.՝ վառելանյութ, մեքենայի յուղ և այլն) փակ տարաներում:

4.5.3. Հողային ռեսուրսներ

Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություն տարածքում առկա բուսահողի (առկա է կանաչ գոտիներում) վրա չի գնահատվում, քանի որ շին-աշխատանքներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող շենք-շինություններով կառուցապատված տարածքներում:

Շինարարական աշխատանքների ընթացքում կբացառվեն հարակից տարածքներում կանաչ գոտիների հատվածում առկա հողային ծածկույթի վրա այլ անուղղակի ազդեցությունները, ինչպիսիք են՝ շինարարի տեղադրում կամ կեղտաջրերի հեռացում և այլն:

Շինհրապարակում քսայուղերը և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված շրջակա տարածքների և հողային համակարգերի հնարավոր աղտոտումը: Նախատեսվող գործունեության ընթացքում մեքենա-սարքավորումների լիզքավորումը, քսայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողությունները հիմնականում կիրականացվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի հնարավորինս բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությանները և հնարավոր ռիսկերը: Նշված ռիսկերի կառավարման միջոցառումները մանրամասն ներկայացված են *ԲԿՊ-ում* (5 և 6 գլուխներ, Թափոնների կառավարում և արտակարգ իրավիճակների կառավարում):

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝

- Շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,
- Աշխատանքների ավարտից հետո խախտված տարածքները վերականգնել և մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,

Շինարարական և կենցաղային աղբով շրջակա տարածքների աղտոտումը բացառելու նպատակով նախատեսվում է՝

- Շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,
- Թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր՝ համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,
- Վտանգավոր թափոնների հանձնում ընկերությունների, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասազերծման, կամ տեղակայման արտոնագիր, կամ կրկնակի օգտագործում,
- Շինանյութերի ձեռք բերում միայն լիցենզավորված մատակարարներից:

4.5.4. Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աղմուկի ազդեցությունը պայմանավորված կլինի շինտեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործմամբ: Օգտագործվող շինարարական տեխնիկական և տրանսպորտային միջոցները ընտրվելու են այն նախապայմանով, որ դրանց տեխնիկական ցուցանիշներում աղմուկի մակարդակը չգերազանցի 80 դԲա: Այս ցուցանիշը թույլ կտա ապահովել աշխատանքային տեղամասերի սանիտարական նորմերը;

- Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝
- Շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- Պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- Շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում:

Աշխատատեղերում աղմուկի մակարդակը պետք է համապատասխանի «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերի պահանջներին, ըստ որի աշխատատեղերում աղմուկի մակարդակը չպետք է գերազանցի 80 դԲԱ, բնակելի և հասարակական շենքերի մոտ՝ ցերեկային ժամերին 55, իսկ գիշերային ժամերին՝ 45 դԲա:

Կառուցապատողը պարատավոր է հետևել ՀՀ թրթռումների գործող նորմերի պահանջմանը, քանի որ աշխատանքների շրջանակում հասցրված ցանկացած ֆիզիկական վնասը կվերացվի ընկերության կողմից՝ սեփական միջոցների հաշվին: Նախատեսվող տեխնիկական միջոցների անձնագրային տվյալները տեղեկատվություն կտան թրթռումների մակարդակի մասին, ուստի տվյալները կստացվեն շահագործման ընթացքում նախատեսված մոնիթորինգի ընթացքում:

4.5.5. Կենսաբազմազանություն

գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ խախտված, կառուցապատված են՝ զուրկ բուսական, կամ հողային ծածկույթից: Նախատեսված աշխատանքներն իրականացվում են հասարակական կառուցապատման տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

Սոցիալական ազդեցությունները և մեղմացումը

Գործունեության ընթացքում հնարավոր սոցիալական ադդեցությունները մեղմացնելու նպատակով ադմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն սահմանափակ ժամերի՝ 9:00-ից 18:00: Կվերահսկվեն շինարարական մեքենաների տեխնիկական վիճակը, որպեսզի դրանք ապահովված լինեն ադմկակլանիչներով, ժամանակին կվերացվեն սարքավորումների անսարքությունները կամ անսարք վիճակում գտնվողները կփոխարինվեն նորերով:

Հնարավոր սոցիալական ադդեցությունները շին-հրապարակում կբացառվեն նաև աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումների իրականացմամբ, որոնք մանրամասն նկարագրված են *ԲԿՊ-ում* (1 ենթագլուխ, Աշխատանքի և առողջության ապահովման պլան), մասնավորապես՝ կիրականցվի հրապարակի ցանկապատում, կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների տեղադրում, հրապարակում աշխատող բանվորական կազմին կտրամադրվեն անվտանգության միջոցներ, կապահովվեն խմելու ջրի և հանգստի կազմակերպան պայմանները:

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ադդեցություններից խուսափելու նպատակով յուրաքանչյուր շինհրապարակում նախատեսվում է՝

- Թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս.
- Շինհրապարակը ցանկապատել և վերահսկել՝ կանխելու համար չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ,
- Վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- Որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ
- Շինարարների համար՝ անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպելում և իրականացում,
- ապահովել աշխատակիցների սննդի ընդունման և հանգստի պայմանները:
- Բեռնատար փոխադրամիջոցների երթևեկությունն իրականացնել միայն ցերեկային ժամերին
- Նվազեցնել մեքենայի արագությունը (պահպանել նախատեսված արագությունը) բնակեցված տարածքներում:

Շինարարության ընթացքում բեռնատար մեքենաների երթևեկությունը չի նախատեսվում շատ ինտենսիվ: Շինհրապարակներում մեքենաների երթևեկությունը կստեղծի որոշակի ծանրաբեռնվածություն ներհամայնքային ճանապարհների վրա: Շինհրապարակում շինարարական աշխատանքների կազմակերպման համար օրական երթերի թիվը սպասվում է 8-10 սահմաններում: Եթե երթերը կատարվեն հավասարապես օրվա ընթացքում՝ 10 ժամ, միջին ժամային թիվը կլինի՝ 1-2 երթ և այս քանակը չի կարող էապես ադդել ճանապարհների երթևեկության վրա:

Ճանապարհների խաթարման և ծանրաբեռնվածության հետևանքով բնակչությանը
պատճառված անհանգստությունը մեղմելու նպատակով նախատեսվում է՝

- Շինարարական հրապարակում բեռնատար մեքենաների ժամանակավոր կայանման համար տարածքների տրամադրում,
- շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժի կազմակերպում շարասյուներով և սահմանափակ արագությամբ (≤ 30 կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժի կազմակերպում՝ առնվազն 30 րոպե պարբերականությամբ,
- Շինհրապարակում խուսափում՝ շինարարական ու կենցաղային աղբի այրումից և կուտակումից,
- Շինարարական աշխատանքների վերաբերյալ մոտակա բնակչությանը իրազեկում, որոնց արդյունքում կարող են ավելանալ փոշու քանակները, աղմուկի մակարդակը և ժամանակավորապես փակվեն ճանապարհները,
- Ցուցանակների տեղադրում, ինչպես նաև ժամանակավոր անցումների նախատեսում՝ որպես այլընտրանքային ճանապարհներ:
- Փակցնել և կիրառել մեքենաների արագության սահմանափակումներ մեքենաների երթևեկությունից առաջացող փոշու նվազեցման համար,
- Մշակել երթևեկության կառավարման պլան երթևեկության սահուն հոսքը և երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով,
- Ապահովել բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը՝ մինչ շինհրապարակից դուրս գալը:

Անիվների լվացման սարքը տեղակայվելու է յուրաքանչյուր շինհրապարակի տարածքում: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով շինհրապարակից դուրս գալուց առաջ: Մեքենաների անիվները և հատակային մասերը մաքրվում են ճնշման տակ գտնվող ծայրափողակի ավտոմատ բացվածքով մեքենայի լվացող սարքի միջով անցնելու ժամանակ: Լվացման սարքից արտահոսող ջուրը հավաքվում է պարզարանում, որտեղ ջուրը գտնվում է մեխանիկական մասնիկներից, յուղային մասից և պոմպի միջոցով վերադարձվում է լվացման սարք, այսինքնով ապահովելով լվացման շրջանառու եղանակ և բացառելով աղտոտված ջրերի արտահոսքը շրջակա տարածքներ:

Պատմամշակութային արժեքներ

Կենտրոն վարչական շրջանի 33-րդ թաղամասում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցապատման աշխատանքների /որոնք իրականացվում են 16 լոտերի հատվածներում/ ընթացքում հնարավոր ազդեցության ենթակա պատմամշակութային արժեքների պահպանման գործընթացները կիրականացվեն ՀՀ գործող օրենսդրական պահանջներին համապատասխան՝ ոլորտին առնչվող պետական լիազոր մարմնի կողմից սահմանված ընթացակարգերին համապատասխան:

Երևան քաղաքի 33-րդ թաղամասի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին 22 մարտի 2018 թվականի Հայաստանի Հանրապետության կառավարության N 332-Ն որոշման համաձայն պատմամշակութային հուշարձաններն ընդգրկված են «Բիրլիս Քոնսթրաքշն», «Տրապիզոն Քոնսթրաքշն», «Ակն Քոնսթրաքշն», «Մանազկերտ Քոնսթրաքշն», «Սասուն Քոնսթրաքշն» ՍՊ ընկերություններին կառուցապատման համար տրամադրված տարածքներում:

Վերջնական աշխատանքային նախագծի մշակման փուլում յուրաքանչյուր կառուցապատողի կողմից ըստ լոտերի կմշակվի վերջնական ճարտարապետա-շինարարական նախագիծ, որը կներառի նաև հուշարձանների պահպանության նախագծերը նշված լոտերի համար: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծերը կհամաձայնեցվեն պետական լիազոր մարմնի հետ և կստանան մասնագիտական եզրակացություններ և որում կսահմանվեն պահպանության ընթացակարգեր:

4.5.6 Թափոնների և այլ նյութերի կառավարումը

Ա) Գործունեության ընթացքում շինարարական աղբը և թափոնները կգոյանան ինչպես քանդման, ապամոնտաժման այնպես էլ կառուցապատման աշխատանքներից: Քանդման և ապամոնտաժման արդյունքում առաջացող թափոնները գնահատվում է երկրորդային օգտագործման համար հիմնականում ոչ պիտանի և ինքնաթափերով անմիջապես կտեղափոխվեն համապատասխան թափոնավայրերում:

Շինարարական աղբի կուտակումը կարող է հանգեցնել հողային համակարգի արտաքին շերտի աղբոտվածության: Նշված ազդեցություններից խուսափելու համար շինաղբը ժամանակավոր կուտակվելու է շինհրապարակում կանոնավոր կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև պարբերաբար տեղափոխվելու և պահվելու է համայնքային աղբավայրում:

Շին աշխատանքների ընթացքում առաջացած երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերը (հիմնականում մետաղի ջարդոններ և փայտանյութ) կտեսակավորվեն և կպահվեն հրապարակում նախատեսված վայրերում՝ շինարարի կողմից հետագա օգտագործման նպատակով:

Բ) Շինարարական աշխատանքների ընթացքում վտանգավոր թափոնների առաջացումը և հնարավոր ազդեցությունները բացառելու նպատակով շինարարության ընթացքում քսայուղերը, հեղուկ վառելիքը կպահվեն փակ տարաներով և անթափանց հիմքերի վրա (բետոնե, մետաղական կամ ավազե), ինչը կբացառի հողային շերտի հնարավոր աղտոտումը: Շինաշխատանքների ավարտից հետո նշված նյութերի մնացորդային քանակները որպես երկրորդային նյութ կօգտագործվեն շինարար կապալառուի կողմից այլ աշխատանքներում:

Գ) Թաղամասի կառուցապատման աշխատանքների ընթացքում կենցաղային աղբը հավաքելու նպատակով կտեղադրվեն աղբամաններ, որտեղից աղբը կանոնավոր կերպով կհեռացվի հանրային աղբամաններ:

Շինարարական աշխատանքների ժամանակ շինհրապարակից հանվող հանույթի, մշակվող գրունտի ծավալը ընդհանուր կկազմի 55.000 մ³, հետլիցքի ծավալը կկազմի՝ 5 000 մ³: Հիմքերի փորման ժամանակ առաջացած մնացորդային հողային գրունտը՝ 50.000 մ³ կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված, կամ կրկնակի կօգտագործվի:

Թաղամասի շահագործման փուլում աղբահանությունը կիրականացվի տարբեր չափերի և նշանակության աղբամանների տեղադրման և աղբի կանոնավոր տեղափոխման եղանակով:

Բնակելի բազմաբնակարան շենքերի մոտ կտեղադրվեն հատուկ աղբահավաք տարողություններ, որոնցում կհավաքվի բնակելի տների կենցաղային աղբը:

Թաղամասի փողոցներում, հանգստի գոտիներում, սպասարկման օբյեկտների մերձակայքում կտեղադրվեն փոքր աղբամաններ, որոնց պարունակությունը ավանի հատուկ սպասարկման ծառայության կողմից կտեղափոխվի աղբահավաք տարողությունների մեջ:

Պայմանագիր կկնքվի քաղաքի աղբահանությունը իրականացնող կազմակերպության հետ այդ աղբահավաք տարողությունների սպասարկման համար:

Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քայուղման գործողությունները կիրականացվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի բացառվի հրապարակում նյութերի արտահոսքերով պայմանավորված հնարավոր ռիսկերը: Թափոնների կառավարման միջոցառումների ցանկը բերված է *ԲԿՊ-ի* Թափոնների կառավարման պլանում:

Աղյուսակ 3.3. Թափոնների տեսակները և քանակները

	Անվանումը	Վտանգավ ո- րության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը, տ/տարի
1	շինարարական աղբ	IV	9120060001004	42151մ ³
2	Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	II	9211010013012	0.08

3	Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ	III	5410030302033	0.3
4	Բանեցված շարժիչների յուղերի թափոններ	III	5410020102033	0.4
5	Բանեցված դողածածկաններ	IV	5750020213004	0.3
6	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	1.0

Շինարարական աշխատանքների ժամանակ կառուցապատվող տարածքում հողային աշխատանքներից գրունտի մնացորդային ծավալը՝ 50.000 մ³ ծավալով դուրս կհանվի արտոնագրված աղբավայր՝ Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված, կամ կրկնակի կօգտագործվի: Հատկացվող հողամասում, համաձայն տեղամասում իրականացված ինժեներա-երկրաբանական ուսումնասիրության արդյունքների՝ պահպանության ենթակա բերրի հողաշերտը բացակայում է:

Շինաղբի ծավալները /որը կարող է առաջանալ ինչպես քանդման աշխատանքների ընթացքում, այնպես էլ շինարարության ընթացքում՝ 42151մ³ ծավալով/ ժամանակավոր կուտակվելու է շինհրապարակում կանոնավոր կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև պարբերաբար տեղափոխվելու և տեղադրվելու են հատկացված աղբավայրում:

Շին աշխատանքների ընթացքում առաջացած երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերը (հիմնականում մետաղի ջարդոններ և փայտանյութ) կտեսակավորվեն և կպահվեն հրապարակում նախատեսված վայրերում՝ շինարարի կողմից հետագա

Աշխատանքների ընթացքում քայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման իրավիճակում նախատեսվում է նշված նյութերը պահել հատուկ անթափանց և փակ տարաներում, որոնք հետագայում որպես երկրորդային նյութ կվերաօգտագործվեն շինարար կապալառուի կողմից այլ աշխատանքներում:

Գործունեության ընթացքում կենցաղային աղբը կհավաքվի կենցաղային աղբի համար նախատեսված աղբամաններում և կանոնավոր կերպով կհեռացվի շինարարական հրապարակից:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ.-ի N430-Ն հրամանի հավելվածի՝ շինարարության ընթացքում առաջացող թափոնները ներկայացված են՝

- շինարարական աղբով, ծածկագիր՝ 9120060001004 /վտանգավորության 4-րդ դաս/,

- Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան ծածկագիր՝ 92110100130120.08 /վտանգավորության 2-րդ դաս/, ընդհանուր քանակը կկազմի 0.08 տոննա/տարի,

- սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ, /վտանգավորության 3-րդ դասին, ծածկագիր՝ 5410030302033/ ընդհանուր քանակը կկազմի 0.3 տոննա/տարի,

- բանեցված շարժիչների յուղերի թափոններ, որոնք պատկանում են վտանգավորության 3-րդ դասին, ծածկագիր՝ 5410020102033 (առավելագույն քանակները շինարարության ընթացքում ընդհանուր կկազմի 0.4/տոննա/տարի):

Կենցաղային չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 91200400 01 00 4: Օրեկական կտրվածքով յուրաքանչյուր շինհրապարակում կառաջանա առավելագույնը 10կգ կենցաղային աղբ:

4.6 Հնարավոր արտակարգ իրավիճակները, աշխատանքի անվտանգություն և առողջություն

Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- հրդեհի առաջացում
- հեղուկ նյութերի արտահոսք
- աշխատողների վնասվածքներ
- շահագործվող տեխնիկայի հետ վթարներ

Հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով պարբերաբար շինարարական տեղամասում կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները՝ այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:

- Շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվելու են հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:

- Բանվորական և ղեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:

- Հեղուկ նյութերը և քսայուղերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղերի հետ առնչվող բոլոր գործողությունները կիրականացվեն հատուկ մասնագիտացված կենտրոններում:

- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի համայնքի բժշկական հաստատությունը:

- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան, որը շինարար կապալառուին պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել:

- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:

- Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկերը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

Յուրաքանչյուր շինհրապարակ պետք է ունենա արտակարգ իրավիճակների կառավարման պլան, որը պետք է մշակվի Երևանի քաղաքապետարանի կողմից տրված շինարարության թույլտվությունից հետո :

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

4.7 Փոխհատուցում, բնապահպանական միջոցառումներ

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցության:

Շինհրապարակի համար մշակվելու է տարածքների վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան: Կանաչապատման աշխատանքներն իրականացվելու են նախագծման առաջադրանքի պահանջներին և տարածքի համար հետագայում մշակվող տարածքի ուղղաձիգ կանաչապատման սխեմային համապատասխան: Շենքերի կողային ճակատներում նախատեսված է ուղղաձիգ կանաչապատում, ընդհանուր մակերեսը կկազմի 1566 ք.մ:

Բուսատեսակները կնորվեն Երևանյան լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին համապատասխան: Ոռոգումն իրականացվելու է նախագծի շրջանակներում կառուցվող

ռոռոգման ցանցի միջոցով: Ամբողջ հողամասը կունենա ռոռոգման ավտոմատ համակարգ: Կանաչապատման միջոցառումները կիրականացվեն կանաչապլանատման և բարեկարգման պլաններին համապատասխան:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո որպես կարևոր միջոցառումներ նախատեսվում է՝

- Բոլոր մակերեսներն այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնել մինչև սկզբնական վիճակը
- Ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացնել շինհրապարակից,
- Թփերի և ծառերի վերատնկման վայրը և քանակը համապատասխանեցնել դենդրոնախագծի պլանին, ապահովել թփերի 90% կաշտդականությունը:
- Այն տեղամասերում, որոնք ենթակա են գործունեության ազդեցության, նախատեսվում է իրականացնել նախնական ուսումնասիրություն և ետնախագծային մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

Ստորև ամփոփ բերվում են նախատեսվող գործունեությունից ակնկալվող բացասական ազդեցությունները մեղմացնող և/կամ բացառող *հիմնական* բնապահպանական, աշխատանքի և առողջության ապահովմանն ուղղված միջոցառումները.

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում
- շինարարական աղբի կանանոնավոր հեռացում և պահում համայնքային աղբավայրում
- հրապարակում կտեղադրվեն կենցաղային թափոնների համար նախատեսված աղբամաններ և այնուհետև դրանք կհեռացվեն հասարակական աղբաման
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու պաշտպանիչ ցանցերի օգտագործում, փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերի սահմանում
- շինարարական մեքենաների տեղաշարժը կիրականացվի սահմանափակ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ
- աղմուկ առաջացնող աշխատանքներն կիրականացվեն թույլատրելի մակարդակների սահմանում և օրվա ցերեկային ժամերին՝ 9.00-18.00
- շինարարական նյութերի ձեռք բերումը կիրականացվի լիցենզավորված մատակարարից
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե/ մետաղական կամ ավազե հիմքերի վրա
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների ընթացակարգերը և կոնտակտային տվյալները պաստառների ձևով կփակցրվեն հրապարակում


- կիրկանացվեն աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումները, ներառյալ՝ բանվորական կազմը կապահովվի սեզոնային արտահագուստով և անվտանգության սաղավարտներով, դիմակներով և այլն
- մեքենաների վառելիքի լիցքավորումը, քսայուղերի փոխարինումը կկազմակերպվի շինհրապարակից դուրս և մասնագիտացված կենտրոններում,
- մշակութային արժեքների պահպանությունն իրականացնել սահմանված ընթացակարգերին համապատասխան
- տարածքում կիրականացվեն հետշինարարական բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է նախագծային աշխատանքների արժեքի մոտ 2 % -ը:

4.8 Կանաչապատում

Կենտրոն վարչական շրջանի 33-րդ թաղամասում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցապատումը նախատեսվում է իրականացնել ընդհանուր 57676.18 մ² տարածք զբաղեցնող Կենտրոն վարչական շրջանի Տիգրան Մեծ, հանրապետություն, խանջյան փողոցներով պարփակված տարածքում: Ընդանուր իրացման գոտին բաժանված է 19 լոտերի, որոնցից յուրաքանչյուրն ունի համապատասխան Ճարտարապետահատակագծային առաջադրանք և յուրաքանչյուր լոտի համար պետք է ունենա մեկ շինհրապարակ:

Համաձայն Ճարտարապետական նախագծի ընդանուր կանաչապատման մակերեսը կազմում է 11600 մ²: Ընդհանուր կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին կազմում է 20.11%:



Կանաչապատման ողջ մակերեսով բուսահողի շերտի հաստությունը կկազմի 0.35մ: Ուսումնասիրելով տեղանքը և խորհրդակցելով դենդրոլոգի հետ առաջարկվում է տեղադրել ստորև նշված բույսերի տեսականին համապատասխան քանակներով, անհրաժեշտությունից ելնելով բուսատեսակների տնկման համար տեղադրել ծաղկամաններ:

- Թղկի կարմիր - 32 հատ
- Սակուռա - 12 հատ
- Գնդաձև իլենի - 29 հատ
- Եղնի կովկասյան - 4 հատ
- Բարբարիս - 25 հատ
- Եղնի արծաթափայլ - 1 հատ
- Գնդաձև սամշիտ - 33 հատ
- Սյունաձև թույա - 22 հատ
- Բուկ եվրոպական - 10 հատ
- Ասպիրակ - 8 հատ
- Դրախտածառ - 8 հատ
- Կատալպա - 11 հատ
- Սամշիտ - 937 գմ
- Ծաղկանոց/թզուկ վարդեր/ - 164.5 մ²

Միզամարզ - 11600 մ²

 1 4000 1 1 4000 1 1 Երևանի Կոնստանտին 32 հատ	 5 2000 5 5 2000 5 5 Բարձրակ - 25 հատ	 9 5000 9 9 5000 9 9 Բույս Երևանի Կոնստանտին 10 հատ	 1 մ²-ում նախատեսվում է 0.033կգ կոմպոստի մեծություն Երևանի Կոնստանտին 383 կգ կոմպոստի մեծություն 13-ՄԱՍՍԱՐԶ-110000մ²
 2 5000 2 2 5000 2 2 ՍԱՄԱՐԶ-12 հատ	 6 5000 6 6 5000 6 6 Երևանի Կոնստանտին 1 հատ	 10 2000 10 10 2000 10 10 ՍԱՄԱՐԶ-8 հատ	 1 գծ-ում նախատեսվում է ՏԵՂԱԴՐԵԼ 4 թուփ Երևանի Կոնստանտին 3748 թուփ 14-ՄԱՍՍԱՐԶ-937գ
 3 2000 3 3 2000 3 3 Երևանի Կոնստանտին 29 հատ	 7 2500 7 7 2500 7 7 Երևանի Կոնստանտին 33 հատ	 11 5000 11 11 5000 11 11 ԴՐԱՍՏԱՆԻ 8 հատ	 1 մ²-ում նախատեսվում է ՏԵՂԱԴՐԵԼ 6 թուփ Երևանի Կոնստանտին 987 թուփ 15-ԹԵՂԱԴՐԵԼ-104.5 մ²
 4 4000 4 4 4000 4 4 Երևանի Կոնստանտին 4 հատ	 8 3000 8 8 3000 8 8 ՍԱՄԱՐԶ-1 Երևանի Կոնստանտին 22 հատ	 12 4000 12 12 4000 12 12 ՎԱՍԻԼԵՎ - 11 հատ	

ՆԱԽԱԳԾՈՂ	Ո. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ	Նախագծի անվանում	ՈՃԱԳՐԻ անվանումը	Ձևի ՆԱԽԱԳԾՈՂ Մաս	ՆԱԽԱԳԾՈՂ Մաս	Մասշտաբ	Ձևի 10	Ձևի 10	Ձևի 10	Ձևի 10
		Երևանի Կոնստանտին 33(Երևանի Կոնստանտին 33)	ՍՈՒՍՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱԿԱՆ ՍԵՏԱՆ	ՍՈՒՍՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱԿԱՆ ՍԵՏԱՆ	ՍՈՒՍՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱԿԱՆ ՍԵՏԱՆ	ՍՈՒՍՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱԿԱՆ ՍԵՏԱՆ	ՍՈՒՍՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱԿԱՆ ՍԵՏԱՆ	ՍՈՒՍՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱԿԱՆ ՍԵՏԱՆ	ՍՈՒՍՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱԿԱՆ ՍԵՏԱՆ	ՍՈՒՍՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱԿԱՆ ՍԵՏԱՆ
		Երևանի Կոնստանտին 33(Երևանի Կոնստանտին 33)	ՍՈՒՍՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱԿԱՆ ՍԵՏԱՆ	ՍՈՒՍՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱԿԱՆ ՍԵՏԱՆ	ՍՈՒՍՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱԿԱՆ ՍԵՏԱՆ	ՍՈՒՍՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱԿԱՆ ՍԵՏԱՆ	ՍՈՒՍՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱԿԱՆ ՍԵՏԱՆ	ՍՈՒՍՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱԿԱՆ ՍԵՏԱՆ	ՍՈՒՍՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱԿԱՆ ՍԵՏԱՆ	ՍՈՒՍՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱԿԱՆ ՍԵՏԱՆ

3. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիթորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով շինարարության կապալառուի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում նախագծային կազմակերպության բնապահպանության մասնագետի կողմից՝ յուրաքանչյուր փուլի մասով, կիրականացվեն մոնիթորինգի ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիթորինգի ստուգաթերթիկում:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է հավելված 1-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է պայմանագրային փաստաթղթերին:

5.1 Մշտադիտարկումների /մոնիթորինգի/ նպատակը

Շինհրապարակում և հարակից տարածքներում մոնիթորինգի իրականացումը հնարավորություն կտա հսկելու շինարարական աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի, կամ հարակից տարածքների վրա՝ վնասակար ազդեցությունների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Մոնիթորինգի իրականացման հիմնական նպատակն է ստեղծել տեղեկատվություն միջավայրի փոփոխությունների մասին:

Շինհրապարակի համար առաջարկվող մոնիթորինգի միջոցառումները հետևյալն են՝

1. Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգ՝ ամիսը մեկ անգամ,
2. Շրջակա տարածքների հողային ծածկույթի մոնիթորինգ՝ ամիսը մեկ անգամ,
3. Տեխնիկական միջոցների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
4. Աղմուկի և թրթռումների մակարդակի չափումներ:

Յուրաքանչյուր շինհրապարակի համար յուրաքանչյուր լոտի կառուցապատվող հատվածում շինարարության ընթացքում կառուցապատողի կողմից իրականացվելու են մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ: Որպես սահմանային թույլատրելի խտությունները ընդունվելու են. ածխածնի օքսիդի համար՝ 5մգ/մ³, ազոտի երկօքսիդի համար՝ 0.2մգ/մ³, մրի համար՝ 0.15մգ/մ³ :

Մթնոլորտային օդի որակի գնահատման մշտադիտարկումների համար նախատեսվող սարքավորումների տեղադրման վայրերի որոշմանը մեծապես նպաստում են եղանակային պայմանները, շինհրապարակների տեղադիրքերը և բնակելի տարածքներից հեռավորությունները :

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան տրամադրել 200.0 հազ.դրամ:

Յուրաքանչյուր շինհրապարակի համար նախատեսվում է իրականացնել մթնոլորտային օդի որակի, աղմուկի, թրթռման, հողային ծածկույթի մշտադիտարկումներ:

Յուրաքանչյուր շինհրապարակ պետք է ունենա արտակարգ իրավիճակների կառավարման պլան, որը պետք է մշակվի Երևանի քաղաքապետարանի կողմից տրված շինարարության թույլտվությունից հետո :

6 ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Սիթի Սենթր Դիվելոպմենթ ՓԲԸ կողմից 2020թ-ի հունիսի 4-ին, ժամը 12:00-ին ք. Երևան, Խորենացի 15 հասցեում, Էլիտ Պլազա բիզնես կենտրոնի հանդիպումների <<Մանթաշով>> դահլիճում տեղի ունեցան <<Երևան քաղաքի 33-րդ թաղամասի կառուցապատում>> նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ 1-ին հանրային քննարկումները: Շահառու և ազդակիր հանրությունն իրազեկվել է նախատեսվող աշխատանքների իրականացման արդյունքում բնապահպանական ազդեցությունների

վերաբերյալ: Քննարկմանը մասնակցել են Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչները, ձեռնարկողի, նախագծային ընկերության ներկայացուցիչները:

Հանդիպման տեսաձայնագրությունը, արձանագրությունը և մասնակիցների ցանկը ներկայացվելու են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Ծրագրի Գործողությունները	Հնարավոր Ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող Միջոցառումները	Մեղմացնող միջոցառման պատասխանատուն	Մոնիթորինգի պատասխանատուն
Նախագծային փաստաթղթերի պատրաստում	Բացասական ազդեցություններ՝ շինարարության փուլում, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում,	Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև պայմանագրային փաստաթղթերում: - Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունների ձեռք բերում - Տարածքում առկա ինժեներական ենթակառուցվածքների անջատման, կամ տեղափոխման վերաբերյալ թույլտվության ձեռք բերում, սեփականատիրոջ հետ համաձայնեցում - Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ Պահանջվող աշխատանքային - Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող Երևանի քաղաքապետարան
Շինարարական Հրապարակի Բոլոր գործողությունները	Պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման:	Աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: - Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ - Աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան բնակիչների և շրջակա տարածքների վրա: - Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների	Կապալառու	

		կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) - Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ; - Փակցնել և կիրառել մեքենաների արագության սահմանափակումներ մեքենաների երթևեկությունից առաջացող փոշու նվազեցման համար, - Մշակել երթևեկության կառավարման պլան երթևեկության սահուն հոսքը և երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով, - Բեռնատար փոխադրամիջոցների երթևեկությունն իրականացնել միայն ցերեկային ժամերին - Նվազեցնել մեքենայի արագությունը (պահպանել նախատեսված արագությունը) բնակեցված տարածքներում		
Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ Այլ շինարարական աշխատանքներ	Շին տեխնիկայի շահագործումից փոշու և վնասակար նյութերի արտանետումներ;	- Օդի աղտոտման և փոշու կառավարում Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում: - Անհրաժեշտ է իրականացնել շին հրապարակի պարբերական ջրցանում և օգտագործել պաշտպանիչ ցանցեր՝ փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով; - Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և հնարավորինս ծածկել կուտակված նյութերը փոշու տարածումից խուսափելու համար; - Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով;	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող, Երևանի քաղաքապետարան Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

		- Շինարարական աշխատանքների ընթացքում հատուկ տարողություններ և աղբավայրեր կնախատեսվեն տարբեր տեսակի շինարարական աղբի հեռացման համար - Աշխատանքների ընթացքում կառաջանան շինարարական թափոններ և աղբ, որոնք անմիջապես կտեղափոխվեն կամ ընկերության արտադրամաս, կամ համապատասխան թափոնավայրեր և չեն առաջացնի կուտակումներ - Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով - Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի - Ապահովել բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը՝ մինչ շինհրապարակից դուրս գալը:		
Թափոնների կառավարում	Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում; Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով Հնարավոր է վտանգավոր նյութերի Թափանցում շրջակա տարածքներ	- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող, Երևանի քաղաքապետարան

		- Բանվորների կենցաղային կեղտաջրերը մաքրվեն կենսաբանական մաքրման կայաններում:		
Աղմուկի և թրթռումների կառավարում	Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:	- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: - Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգալուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը; - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին: - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;	Շինարարության կապալառու	Երևանի քաղաքապետարան
Շինհրապարակի Վերականգնում		- Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ ապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն; - Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները; - Մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը; - Մշակված ընդունման-հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները;	Շինարարության կապալառու	Երևանի քաղաքապետարան

Մշակութային արժեքներ		- Կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն կանաչապատման նախագծի բարեկարգման պլանների; Ձեռնարկել տնկված բուսականության պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր կաշտդականություն աճն ապահովելու համար - պատմամշակութային արժեքների պահպանման գործընթցներն իրականացնել ոլորտին առնչվող պետական լիազոր մարմնի կողմից սահմանված ընթացակարգերին համապատասխան:	Շինարարության կապալառու	Կրթության, գիտության, Մշակույթի և սպորտի, նախարարություն
----------------------	--	---	-------------------------	--

8. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	(ն՞վ է իրակա- նացնում մոնիթո- րինգը)
Շինանյութերի մատակարար- ում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու Երևանի քաղաքապե- տարան
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս Երևան քաղաքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու Երևանի քաղաքապե- տարան

Հողային աշխատանքներ	- Հանված հողային գրունտները պահեստավորում են թույլատրված վայրում - Անհրաժեշտության դեպքում ետլիցք, ավելցուկի օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Պատվիրատու Կապալառու քաղաքապետարան
Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	Վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի Պատահական կամ Մշտապես տեղի ունեցող Արտահոսքեր	Շինհրապարակ	Շինհրապարակի զննում	Շինարարության ընթացքում	Կապալառու Երևանի քաղաքապետարան
Շինարարական հրապարակի բարեկարգում	Շինարարական հրապարակի ժամանակավոր պահեստի /բետոնախառնիչի/ ապամոնտաժում, և տեղանքի բարեկարգում - Շինհրապարակի վերջնական մաքրում, տարածքի բարեկարգում և վերականգնում	Շինարարական հրապարակ, ժամանակավոր պահեստներ	Ստուգման գործընթացներ	Շինարարության ավարտական փուլ	Կապալառու Երևանի քաղաքապետարան
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու Երևանի քաղաքապետարան
Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և տարածքի բարեկարգում	- Շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր Օգտագործված տարածքները վերականգնված են,	Տեղամասեր Կատարած Ստուգայցեր	Շինհրապարակի զննում	Շինարարության ավարտին	Կապալառու Երևանի քաղաքապետարան

	- շինհրապարակի Տարածքը բարեկարգված և կանաչապատված են, ապահովված է ծառերի թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Կանաչապատվ ող բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Շինարարության ավարտից սկսած մինչև ծառերի աճի կաշռականության ապահովումը	Կապալառու Երևանի քաղաքապե- տարան
--	---	--------------------------------------	------------	--	---

9. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. Հունիսի 21:
- ԱԶԲ 2015, Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. Սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- <Http://xn--80aajzhcnfck0a.xn--plai/publicdocuments/1310049.pdf>
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- <Www.arlis.am>
- <Www.atdf.am>
- ՀՀ կառավարության N 862-Ա որոշում: Անհատույց սեփականության իրավունքով գույք հանձնելու և քանդման (ապամոնտաժման) աշխատանքներ կազմակերպելու մասին: 25 օգոստոս 2016, URL: <https://www.e-gov.am/gov-decrees/item/27593/>:
- Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներ, Մոսկվա, Հիդրոմետհրատ – 1983:
- ՀԲ 2015: Բնապահպանական և սոցիալական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիանների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին: